

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐ

Միխայիլ Աղաջանյան

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը նախկին ԽՍՀՄ տարածքում քաղաքական և իրավական բնույթի ամենահրատապ հարցերից է: ԽՍՀՄ 15 հանրապետություններից միայն մի քանիսն էին միատարր պետական կազմավորումներ, որոնցում տիտղոսակիր ազգի գերակշռության որակաքանակական բնութագրերն ավելի քան նշանակալի էին: Ադրբեջանի ԽՍՀ կազմում ապրում էին մեծաթիվ ազգային փոքրամասնություններ, որոնց հասարակական-քաղաքական դերն ու մշակութային ինքնատիպությունն ամեն կերպ նսեմացվում էին, կեղծվում էին նրանց որակական-քանակական տվյալները:

Հոդվածում չեն քննարկվում ազգագրական հետազոտությունների ոլորտին առնչվող, ինչպես նաև իրավաքաղաքական բնույթի (օրինակ՝ XX դարի 20-ական թթ. «կովկասյան թաթարներ»՝ «ադրբեջանցու» վերածվելու հարցը կամ նախկին ԼՂԻՄ հայերին ներկայիս Ադրբեջանի Հանրապետության տարածքում ազգային փոքրամասնության կարգավիճակ տալու իրավաքաղաքական անհեթեթության հարցերը) շատ խնդիրներ:

Հոդվածը նվիրված է Ադրբեջանի ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության, այդ իրավունքների երաշխիքների կազմակերպական-իրավական մեխանիզմների գործունեության և արդյունավետության հետազոտությանը:

1. Ադրբեջանի ազգային փոքրամասնությունների ներկայությունը քանակական-որակական բնութագիրը և իրավաքաղաքական մեկնաբանումներ

Ստալինյան-լենինյան ազգային քաղաքականության անցկացման հարցերում խորհրդային կուսակցական նոմենկլատուրայի ծանր, միևնույն ժամանակ նաև «խտրություն չդնող» ձեռքը գրեթե անտեսում էր ԽՍՀՄ տարածքում առկա էթնոքաղաքական իրողությունները: Հետագայում որոշ իրողություններ ճիշտ ընկալվեցին, և խորհրդային ղեկավարությանը հաջողվեց թուլացնել և ժամանակավորապես չեզոքացնել ազգային հարցերը: Մակայն էթնոքաղաքական բնույթի հարցերն այնքան մեծ նշանակություն ունեն, հատկապես այդքան խոշոր դաշնության մասշտաբով, որ նույնիսկ

մեկ չլուծված կամ սառեցված խնդիրը կարող է արթնացնել մնացած բոլոր՝ կարգավորված թվացող ազգային հակամարտությունները:

Խորհրդային պետության՝ որպես էթնիկական հատկանիշով կառուցված կազմավորման, առանձնահատկությունը, ինչպես նաև այդ սկզբունքից բխող էթնոսների ու էթնիկական խմբերի «տարակարգումն» ընդգծում են շատ հետազոտողներ [1]:

Ներկայիս Ադրբեջանի Հանրապետությունը (ԱՀ) բազմազգ պետություն է, որտեղ, ԽՍՀՄ փլուզումից և Ադրբեջանի ԽՍՀ իրավաքաղաքական լուծարումից հետո, ապրում են մի քանի տարբեր էթնոմշակութային հանրույթներ: Վերջիններս պետք է դիտարկվեն որպես Ադրբեջանի ազգային փոքրամասնություններ, որոնք տիտղոսակիր ազգից՝ հանձինս ադրբեջանցիների, տարբերվում են իրենց ազգային, էթնոմշակութային, կրոնական և այլ հատկանիշներով:

Ադրբեջանական և ադրբեջանամետ աղբյուրները նշում են, որ Ադրբեջանում ապրող գրեթե 8,5 մլն մարդկանց 90%-ից մի փոքր ավելին էթնիկ ադրբեջանցիներ են: Միննույն ժամանակ, երկրում բնակվում են մոտ 20 ազգային փոքրամասնություններ, որոնցից ամենամեծաթիվն են լեզգիները, թալիշները, ռուսները, թուրք մսխեթցիները և քրդերը: Ադրբեջանի բուն ժողովուրդների թվին են դասվում միայն լեզգիները, թալիշները և քրդերը: Նրանք ապրում են իրենց պատմական բնակատեղիներում՝ որոշ մասերում կազմելով բնակչության մեծամասնությունը [2]:

Այսպիսով, որոշակի տարբերակում է անցկացվում «ազգային փոքրամասնություն» և «բուն ժողովուրդ» հասկացությունների միջև: Բուն ժողովուրդներ համարվող լեզգիների, քրդերի և թալիշների համար բերվում են հետևյալ ընդհանուր տվյալները:

Լեզգիներն ապրում են հանրապետության հյուսիս-արևելքում: Նրանց բնակության շրջանը սահմանամերձ է ռուսական Կովկասին, որտեղ ապրում է լեզգի ժողովրդի մեծամասնությունը: Ադրբեջանում լեզգիների թիվը, ըստ ժողովրդագրական գնահատումների, հասնում է մոտ 260 հազարի (1999թ. պաշտոնական տվյալների համաձայն՝ 178 հազար): Նրանք հոծ բնակություն են կազմում Ադրբեջանի հյուսիսային (Խաչմազի և Գուսարի) շրջաններում: Հաղորդակցության լեզուն՝ լեզգիերենը, պատկանում է կովկասյան լեզուների դադստանյան ճյուղին, խոսում են նաև ադրբեջաներեն ու ռուսերեն: Լեզգիների ազգային շարժման առաջնորդների հավաստմամբ՝ նրանց թիվն Ադրբեջանում գերազանցում է 800 հազարը:

Քրդերը կենտրոնացած են Ադրբեջանի արևմուտքում՝ Հայաստանի հետ սահմանի երկայնքով: Ժողովրդագիրների գնահատականներով՝ նրանց թիվը հանրապետությունում կազմում է մոտ 60 հազար մարդ

(1999թ. պաշտոնական տվյալներով՝ 19 հազար. այս նկատելի տարբերությունը բացատրվում է ուժացման բարձր մակարդակով):

Թալիշները Ադրբեջանի բուն իրանական բնակչությունն են, ինչն էլ առանձնացնում է նրանց հանրապետության՝ թյուրքական ծագում ունեցող բնակչության մեծամասնությունից: Թալիշները բնակվում են Ադրբեջանի՝ Իրանին (որտեղ ապրում է թալիշների մեծամասնությունը) սահմանամերձ հարավարևելյան շրջանում:

1999թ. պաշտոնական մարդահամարի համաձայն՝ Ադրբեջանում թալիշների թիվը հասնում էր գրեթե 77 հազարի: Ժողովրդագիրների տվյալներով՝ նրանց իրական թիվը մոտավորապես 250 հազար է: Սակայն, թալիշների ազգային առաջնորդների հավաստմամբ՝ հանրապետությունում ապրում են 1-1,5 մլն թալիշներ: Նրանց մեծամասնությունը, Բաքվի խտրական քաղաքականության արդյունքում, կամ կորցրել է ազգային ինքնագիտակցությունը, կամ զգուշանում է բացահայտորեն ընդունել, որ թալիշ է: 1993թ. ամռանը, Ադրբեջանում քաղաքական իրադրության ապակայունացման ֆոնին, ազգային շարժման առաջնորդները հայտարարեցին Թալիշական հանրապետության ստեղծման մասին: Այն գոյատևեց ընդամենը երկու ամիս և նախագահ Ալիևի հրամանով լուծարվեց ուժային կառույցների մասնակցությամբ [2]:

Ինչպես նշում են մասնագետները, փոքրամասնությունների առջև ծառայած շատ խնդիրներ նույնն են ամբողջ աշխարհում, սակայն առաջնային համարվող հարցերում գոյություն ունեն զգալի տարբերություններ: Գերակա խնդիրների թվում են՝ հարձակումների կամ փոքրամասնությունների առանձին անդամների նկատմամբ վատ վերաբերմունքի այլ դրսևորումների կանխարգելումը, նրանց նկատմամբ պարբերական խտրականության կանխումը և այնպիսի միջոցառումների ձեռնարկումը, որոնք ուղղված կլինեն ազգային և տեղական մակարդակներում քաղաքական որոշումներ կայացնելու ընթացքում փոքրամասնությունների ներկայացուցիչներին չբացառելուն [3]:

Ազգային փոքրամասնությունների և բուն ժողովրդի իրավունքների տարբերակումը կարևոր է ոչ միայն Ադրբեջանի առնչությամբ, այլև հրատապ հարց է եվրոպական ու այլ տարածաշրջանային իրականությունների համար:

Իր հիմնադրման պահից Եվրոպայի խորհուրդն առաջատար դեր է խաղում փոքրամասնությունների իրավունքների չափորոշիչների սահմանման գործում: Սակայն Եվրոպայի խորհրդի աշխատանքի արդյունավետությունը սահմանափակ էր մինչև *Տարածաշրջանային լեզուների և փոքրամասնությունների լեզուների մասին 1992թ. եվրոպական խարտիայի* և *Ազգային փոքրամասնությունների պաշտպանության 1995թ. շրջանակային*

կոնվենցիայի ընդունումը: Մինչև այս կոնվենցիաների ընդունումը փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ մոտեցումը համապատասխանում էր փոքրամասնությունների իրավունքների հին հայեցակարգին, ըստ որի՝ այդ իրավունքները դիտարկվում էին որպես հատուկ արտոնություններ, որոնք պետությունն, ըստ իր հայեցողության, կարող էր շնորհել որոշ խմբերի, որպես կանոն, հարևան պետության ճնշմամբ [4]:

Այժմ փոքրամասնությունների իրավունքները մարդու հիմնական իրավունքների անքակտելի բաղադրիչն են և ոչ թե հատուկ արտոնություններ, որոնք պետությունը կարող է շնորհել իր ընտրությամբ: Փոքրամասնությունների իրավունքների առանձնահատկությունն այն է, որ դրանք, որպես կանոն, ընկալվում են որպես անհատական իրավունքներ, որոնցից, սակայն, կարելի է օգտվել այլ անձանց հետ համատեղ: Փոքրամասնությունների իրավունքներն, ըստ էության, խմբային իրավունքներ չեն: Մրա համեմատ՝ «բուն ժողովրդի իրավունքներ» հասկացությունը և՛ եզրաբանորեն, և՛ բովանդակային առումով ավելի շատ մատնանշում է դրանց իրականացման և պաշտպանության կոլեկտիվ բաղադրիչ: Այսպես, օրինակ, եթե համեմատենք *Ազգային կամ էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին հռչակագիրը* (ընդունվել է 1992թ. ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի բանաձևով) և *Բուն ժողովուրդների և անկախ երկրներում ցեղային կյանք վարող ժողովուրդների մասին կոնվենցիան* (ընդունվել է 1989թ. Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) կողմից), ապա առաջինը գործառում է «ազգային կամ էթնիկական... փոքրամասնություններին պատկանող անձինք իրավունք ունեն» սկզբունքով, իսկ երկրորդը «տարածվում է ժողովուրդների վրա». «բուն ժողովուրդները... առանց խոչընդոտների և խտրականության լրիվ չափով օգտվում են մարդու իրավունքներից և հիմնական ազատություններից» (հոդված 3):

Չնայած ազգային փոքրամասնությունների և բուն ժողովրդի իրավունքների պաշտպանության անհատական և հավաքական ասպեկտների տարբերություններին՝ գոյություն ունի ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հավաքական պաշտպանության անհրաժեշտության հստակ դիրքորոշում: 2006թ. հունվարի 1-ի 1735 (2006) հանձնարարականում Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը նշել է, որ ազգային փոքրամասնությունները պետք է հանդիսանան հավաքական պաշտպանության օբյեկտ և դա փաստարկել է հետևյալ կերպ. «Քանի որ ազգային փոքրամասնություններն իբրև այդպիսին իրավական սուբյեկտ չեն, նրանք չեն կարող լինել պայմանագրերի կամ պակտերի կողմեր: Սակայն նրանք պետք է լինեն հավաքական պաշտպանության օբյեկտ, իսկ

նրանց անդամները՝ կամ որպես իրավունքի անհատական սուբյեկտներ, կամ որպես իրավաբանական անձ հանդես եկող տարբեր կառույցների անդամներ, պետք է իրավագոր լինեն պաշտպանելու փոքրամասնությունների ազգային ինքնատիպությունը և մշակութային իրավունքները: Այդ իրավունքները տարածքային բնույթ չեն կրում..., իսկ դրանց ճանաչումը և պաշտպանությունը իրավաբանորեն պետք է կազմակերպված լինեն ինչպես յուրաքանչյուր շահագրգիռ ազգային պետության, այնպես էլ վերագրային (միջազգային) մակարդակներում» (հանձնարարականի 10-րդ կետ):

ՄԱԿ-ի ներսում հստակ սահմանազատում է արվել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց և բուն ժողովուրդների իրավունքների միջև: 1995թ. Շրջանակային կոնվենցիան տարբերություն չի դնում բուն ժողովուրդների և փոքրամասնությունների միջև: ԱՄԿ 1989թ. կոնվենցիան ավելի, քան Շրջանակայինը, մեծ պաշտպանություն է հատկացնում այն պետությունների բուն ժողովուրդներին, որոնք ընդունել են այդ կոնվենցիան [3, c. 38]:

Տարածքային առումով տեղայնացված որոշ փոքրամասնությունների համար մեծ կարևորություն ունի հողի և բնական պաշարների արդյունավետ վերահսկողությունը, ինչպես նաև զարգացմանն ուղղված նախագծերի կամ գործունեության վրա արդյունավետ ազդեցությունը [3, c. 37]:

Ժամանակակից իրավաբանական անթրոպոլոգիան նույնպես հաստատում է, որ ցանկացած «բուն» կամ «տեղի» էթնիկական խումբ, անկախ իր կենսակերպից ու մշակութից, իրավունք ունի օգտագործել այն հողերի բնական պաշարները, որոնք անհրաժեշտ են տվյալ խմբի անդամների ավանդական տնտեսության պահպանման համար և որոնք իրապես օգտագործվել են նրանց անմիջական նախնիների կողմից: Այս իրավունքի ճանաչումն ինքնին հետևանքն է բնակչության ցանկացած էթնոշմակութային խմբի՝ կյանքի և ավանդական մշակութի, կենսակերպի և տնտեսության պահպանման իրավունքի ճանաչման. այս իրավունքն այժմ ակտիվորեն թափանցում է աշխարհի պետությունների մեծ մասի միջազգային և ազգային իրավունքի ոլորտ [5]:

Այս կապակցությամբ օգտակար կլինի վկայակոչել XXI դարակզբին Ադրբեջանի «Ժողովրդավարացման» անդրադարձող ադրբեջանցի փորձագետների կարծիքը: ԱՀ հողային ռեֆորմի մասին օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ հողերի մի մասը հանձնվել է տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինությանը, որպեսզի այդ հողերից ստացված եկամուտներով դրանք կարողանան ֆինանսավորել իրենց ծրագրերը: Սակայն այնուհետև ընդունվեց Հողային օրենսգիրքը, որի 46-րդ հոդվածի համաձայն՝ այդ նույն հողերը հետ վերցվեցին տեղական ինքնակառավարման

մարմիններից: Այս օրենսգրքի շնորհիվ օրենսդիր և գործադիր իշխանությունները (հարկ կա՞, արդյոք, կրկնելու, որ ադրբեջանական «նեոֆեոդալիզմի» պայմաններում իշխանության երկու ճյուղերն իշխանության մեկ ուղղահայացի բաղադրիչներն են) էապես սահմանափակեցին «ինքնակառավարման» տեղական մարմինների ֆինանսական ադրյուրները (*Ռահման Բադալով*, Ադրբեջանի ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող) [6]:

Վերոնշյալ երեք փոքրամասնությունների (լեզգիներ, քրդեր և թալիշներ) վերաբերյալ, որոնք կարող են դիտարկվել իբրև ԱՀ ներկայիս տարածքում ապրող բուն ժողովուրդներ, ադրբեջանցի փորձագետները բերում են հետևյալ տվյալները:

Լեզգիները Ադրբեջանում ապրող դադստանալեզու ամենախոշոր էթնոսներից են: Խորհրդային ժամանակների մարդահամարների տվյալներով՝ լեզգիների տեսակարար կշիռը երկրի բնակչության կազմում մշտապես իջեցվում էր. 1939թ. 3,5%-ից (111 հազար մարդ) մինչև 2,4% 1989թ. (171 հազար): Ինչպես տեսնում ենք, լեզգիների տեսակարար կշռի անկման պարագայում միաժամանակ նկատվում էր նրանց թվաքանակի աճ բացարձակ թվերով: Հետևաբար, չնայած առկա էր ձուլման գործընթացը, այն, սակայն, այնքան էլ ինտենսիվ չէր: 1999թ. մարդահամարի նախնական տվյալների համաձայն՝ լեզգիների թիվը կազմում էր շուրջ 180 հազար մարդ: Չնայած լեզգիների տեսակարար կշիռը նվազել էր մինչև 2,2%-ի, հայ և ռուս բնակչության տեսակարար կշռի նվազման արդյունքում նրանք թվաքանակով ադրբեջանցիներից հետո դարձել են երկրորդ էթնոսը: Գուսարի շրջանից հետո, որտեղ լեզգիները կազմում են բնակչության 80%-ից ավելին, նրանք բնակչություն են հաստատել նաև Ադրբեջանի Խաչմազի, Ղուբայի, Ղաբալայի և այլ շրջաններում: Լեզգիներն, անկասկած, Կովկասի բնիկներից են: Պատմականորեն բնակվելով Սամուրի ձախափնյակում՝ ներկայիս հարավային Դադստանում, լեզգի ցեղերը հարյուրամյակների ընթացքում աստիճանաբար առաջ են շարժվել դեպի հարավային, նախալեռնային և մերձկասպյան գոտիներ: Ռուսական կայսերական իշխանությունները, վերանվաճված տարածքում վարչական բարեփոխում իրականացնելիս, Բաքվի նահանգն ու Դադստանի մարզը սահմանազատեցին Սամուր գետով (1860թ.): Այդ գիծն էլ ՌԽՖՍՀ-ի և Ադր. ԽՍՀ-ի միջև ընդունվեց սահմանային խորհրդային իշխանության հաստատումից հետո: Սակայն ԽՍՀՄ փլուզմամբ ու Ադրբեջանի Հանրապետության անկախության հաստատմամբ այդ սահմանը վարչականից վերածվեց միջպետականի: Արդյունքում՝ բաժանվեցին և՛ ադրբեջանցիները, և՛ լեզգիները, որոնց մեծ մասը բնակվում է Դեր-

բենտ քաղաքում և նրան հարակից շրջաններում: 1989թ. մարդահամարի տվյալներով՝ տեղի լեզգիների 47,5%-ը ադրբեջաներենը, որով նրանք ազատ հաղորդակցվում են, համարում է իր երկրորդ լեզուն: Այսօր Ադրբեջանում տարրական դասարաններում ուսուցումը լեզգիերեն է, հրատարակվում են թերթեր, հեռարձակվում են ռադիոհաղորդումներ: Արդեն երկար տարիներ հաջող գործունեություն է ծավալել լեզգիական ազգային-մշակութային «Մամուր» կենտրոնը: 1998թ. Գուսարում բացվեց լեզգիական պետական թատրոնը [7]:

Ադրբեջանի ծայր արևմուտքում, Լաչինին և Քելբաջարին սահմանամերձ շրջաններում, ինչպես նաև Նախիջևանի ԻՀ-ում ապրում են *քրդեր*: Էթնիկական այս խմբի թվաքանակն Ադրբեջանում ենթարկվել է այնպիսի փոփոխությունների, որոնք համանման են թալիշների հետ տեղի ունեցածին: 1962թ. մարդահամարով գրանցվել է ավելի քան 40 հազար քուրդ կամ բնակչության ընդհանուր թվաքանակի 1,8%-ը: Հետագայում քրդերի «պաշտոնական» թվաքանակը կրճատվել է ավելի քան տասն անգամ: 1989թ. քրդերի թվաքանակը հասնում էր 12 հազար մարդուց մի փոքր ավելի: Պատմական վկայությունները և մի շարք տեղանուններ թույլ են տալիս ենթադրել, որ քրդերն Ադրբեջանի տարածքում հայտնվել են դեռևս XI դարում: Մերձավոր Արևելքում քրդերի բնակության պատմական տարածքների հետ Ադրբեջանի սահմանակցությունը կանխորոշել է ինչպես քրդերի առանձին խմբերի, այնպես էլ ամբողջ ցեղերի միգրացիան այստեղ: Քրդերի լեզուն պատկանում է իրանական հյուսիսարևմտյան ճյուղին: Մեծամասնությունը սուննի և շիա մահմեդականներ են: Ադրբեջանական քրդերի մեծամասնությունը շիա մահմեդականներ են:

Քրդերի ձուլումն ադրբեջանական միջավայրում, ինչպես խորհրդային շրջանում, այնպես էլ դրանից առաջ, ընթանում էր բավական ինտենսիվորեն: Տեղի քրդերի գերակշռող մեծամասնությունը կրթություն է ստացել ադրբեջանական դպրոցներում և լայնորեն օգտագործում է ադրբեջաներենը՝ նույնիսկ իրար հետ հաղորդակցվելիս: Այսօր քրդերեն կարող են խոսել միայն ավագ սերնդի փոքրաթիվ ներկայացուցիչներ: Քրդերենի, քուրդ ժողովրդի հոգևոր մշակույթի պահպանման և զարգացման նպատակով ձեռնարկվող ջանքերն արդյունավետությամբ աչքի չեն ընկնում: Ներկայումս Մշակույթի հանրապետական հիմնադրամին առընթեր գործում է քրդական ազգային-մշակութային «Ռոնախ» կենտրոնը, երբեմն-երբեմն հրատարակվում է «Քուրդուն սասը» թերթը [7]:

Թալիշները բնակություն են հաստատել Ադրբեջանի հարավ-արևել-

քում, գլխավորապես Լենքորանի, Աստարայի և, մասամբ, Մասալիի և Լե-րիկի շրջաններում: Նրանցից շատերն այսօր ապրում են Բաքվում և Սում-գայիթում: Խորհրդային առաջին՝ 1926թ. մարդահամարով հաշվառվել է 77,3 հազար թալիշ, որը կազմել է Ադրբեջանի այն ժամանակվա բնակչության 3,3%-ը: Իսկ արդեն 1939թ. մարդահամարով գրանցված է եղել ընդամենը 3 հազար թալիշ: Հետագայում նրանց վերաբերյալ սյունակն ընդհանրապես բացակայում էր հարցաթերթիկներում: Միայն 1989թ. մարդահամարին 21 հազար մարդ ազգային պատկանելության սյունակում նշել էր՝ թալիշ: Շատ անսպասելի էին 1999թ. մարդահամարի տվյալները. թալիշների թվաքանակը հասնում էր 80 հազարի կամ կազմում էր երկրի ամբողջ բնակչության 1%-ը: Բայց կարելի է ենթադրել, որ նույնիսկ այս թիվն իջեցված է և չի ար-տացույցում թալիշական ինքնություն կրող մարդկանց իրական թվաքանակը: Ադրբեջանում թալիշների թվի նման անկումը բացատրության կարիք ունի: Այստեղ խորհրդային-կոմունիստական ողջ շրջանում և անկախության փուլում թալիշների զանգվածային ոչ մի վերաբնակեցում չի եղել: Բայց ԽՍՀՄ-ում «ավելորդ» փոքր էթնոսների հաշվին «անվանակիր» ազգերի մեծացման ամենուրեք տեղի ունեցող գործընթացին համապատասխան՝ տեղի թալիշները նույնպես հաշվառվել են որպես ադրբեջանցիներ: ԽՍՀՄ փլուզումից հետո, անկախ Ադրբեջանում, թալիշների զգալի մասն օգտվեց ընձեռված հնարավորությունից և վերականգնեց էթնիկ ինքնությունը:

Թալիշները խիստ սերտաձել են ադրբեջանցիների հետ: Թալիշների և ադրբեջանցիների ավանդույթները, մշակույթն ու կենցաղը քիչ են տարբեր-վում իրարից: Երկար տասնամյակներ թալիշները սովորում են ադրբեջա-նական դպրոցներում և հոյակապ տիրապետում են ադրբեջաներենին, իսկ թալիշերենն օգտագործում են առօրյա կյանքում (ավելի շատ, իհարկե, գյուղական վայրերում, քան քաղաքներում): Ներկայումս թալիշներով խիտ բնակեցված վայրերում մտցվել են թալիշերենի ուսուցման դասընթացներ, հրատարակվում է «Թալիշ սեդո» թերթը, եթեր են արձակվում թալիշերեն ռադիոհաղորդումներ: Բաքվում և Լենքորանում գործում են թալիշական մշակութային կենտրոններ:

Պատմության ողջ ընթացքում ադրբեջանցիների և թալիշների միջև էթնիկական ընդհարումներ չեն գրանցվել: Սակայն Ադրբեջանի Հանրապե-տության անկախության համար պայքարի ժամանակաշրջանում, աճող թյուրքական ազգայնականության համատեքստում, թալիշական ինքնու-թյան վերականգնումը լարվածության որոշակի հոդ ստեղծեց նրանց միջև: Ստեղծվեց Թալիշների ժողովրդական կուսակցությունը: Ավելի ուշ, էթնի-

կական գործոնը չընդգծելու և ադրբեջանա-թալիշական դիմակայություն բորբոքելու մեջ չմեղադրվելու նպատակով՝ նրա առաջնորդներն այն վերանվանեցին Ժողովուրդների իրավահավասարության կուսակցություն¹:

Տրոհման և հանրապետական կենտրոնի հետ հակառակության գործընթացը հանրապետության հարավում գագաթնակետին հասավ 1993թ.: Պաշտպանության նախարարության վարչություններից մեկի պետ, գնդապետ Ալիաքրամ Գումբատովը, 1993թ. օգոստոսին իրեն ենթարկեցնելով հարավում տեղակայված զորամասերը, հարավային շրջանների վարչակազմն ու իրավապահ մարմինները, հայտարարեց Ադրբեջանի կազմում Թալիշ-Մուղանական հանրապետության (ԹՄՀ) ստեղծման մասին:

Ներկայումս, չնայած սոցիալ-տնտեսական ծայրահեղ վատ իրավիճակին, դրությունն Ադրբեջանի հարավում բավական կայուն է և ամբողջովին վերահսկվում է իշխանությունների կողմից: Իհարկե, նկատվում է Իրանի (որի սահմանակից տարածքում ապրում են ավելի քան 100 հազար թալիշներ) ձգտումը՝ օգտագործել շիա թալիշների ջերմեռանդությունն ու լեզվական մերձավորությունը՝ Ադրբեջանում իր ազդեցությունն ամրապնդելու համար: Թալիշները և, ընդհանրապես, երկրի հարավային շրջաններից սերվածներն ավանդաբար զբաղված են առևտրի ոլորտում: Նրանք բավական մեծ թիվ են կազմում իրավապահ մարմիններում և զինված ուժերի սպայական անձնակազմում: Պակաս կարևոր նշանակություն չունի նաև այն, որ Ադրբեջանի և Կովկասի մահմեդականների հոգևոր առաջնորդ, շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեն (ծնվ. Աստարայի շրջանում) և երկրի շատ այլ կրոնական գործիչներ ծագումով թալիշ են: Այսպիսով, առաջիկայում հանրապետության հարավում էթնիկական լարվածության օջախի առաջացման հավանականությունն աննշան է [7]:

Վերը նշված «Իրանի (որի սահմանակից տարածքում ապրում են ավելի քան 100 հազար թալիշներ) ձգտումը՝ օգտագործել շիա թալիշների ջերմեռանդությունն ու լեզվական մերձավորությունը՝ Ադրբեջանում իր ազդեցությունն ամրապնդելու համար», հետաքրքիր է համեմատել այն հայտարարությունների հետ, որ հնչել են 2006թ. մարտի 16-ին Աշխարհի ադրբեջանցիների երկրորդ համագումարում: Պատվիրակները Թեհրանի համար աննպաստ դիտակետից վկայակոչեցին 1828թ. Թուրքմենչայի պայմանագիրը՝ բերելով հիշատակում Ադրբեջանի առանձին երկիր լինելու մասին: Դրան հետևեց իրանական կողմի կոշտ արձագանքը, որին վրդովեցրել

¹ «Ազգային փոքրամասնությունների գործունեության հետ կապված՝ հարկ է ուշադրություն դարձնել այն բանի վրա, որ դեպի անջատողականություն տանող ուղիներից մեկը քաղաքական կուսակցությունների և շարժումների ստեղծումն է ըստ ազգային հատկանիշի: Սակայն նման միտումներ Ադրբեջանում հիմնականում չկան» (Օրսուջեվ Դ., Национальные меньшинства Азербайджана сегодня // Центральная Азия и Кавказ, 2003, № 4 (28), с. 163):

էին «հակաիրանական տարրերի սադրիչ հայտարարությունները»: Իրանի դեսպանության՝ ադրբեջանական իշխանություններին ներկայացրած բողոքի նոտայով պահանջվում էր անմիջապես դադարեցնել նման գործողությունները, կասեցնել «հակաիրանական տարրերի» գործունեությունը և հետևել Բարեկամական հարաբերությունների ու համագործակցության սկզբունքների մասին 2002թ. պայմանագրի դրույթներին [8]:

Ադրբեջանցիների և վերոնշյալ բուն ժողովուրդների լեզվական ընդհանրության համատեքստում ադրբեջանցի փորձագետները նշում են, որ «1970, 1979 և 1989թթ. մարդահամարների տվյալների համաձայն՝ որոշ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ ազատ տիրապետում էին ռուսերենին (հայեր, ուկրաինացիներ, թաթարներ, թաթեր, ուղիներ և այլք), մյուսները՝ ադրբեջաներենին (լեզգիներ, ավարներ, թալիշներ, քրդեր և ուրիշներ)» [9]:

ԱՀ 2002թ. «Ադրբեջանի Հանրապետության պետական լեզվի մասին» օրենքն ունի դրույթ պետական լեզվի իրավաբանական կարգավիճակի վերաբերյալ. «Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական կառույցներում, քաղաքական կուսակցություններում, ոչ պետական կազմակերպություններում (հասրակական միավորումներում և ֆոնդերում), արհմիութենական կազմակերպություններում, այլ իրավաբանական անձանց, նրանց ներկայացուցչությունների և մասնաճյուղերի, հաստատությունների կողմից իրականացվում է գործունեություն պետական լեզվի կիրառմամբ՝ համաձայն այս օրենքի, այդ թվում՝ գործավարությունը կատարվում է պետական լեզվով» (մաս 4, հոդ. 1): Հաշվի առնելով այն, որ 2001թ. Եվրոպայի խորհուրդ մտնելիս Ադրբեջանը, այդ միջազգային կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի N222 (2000) Եզրակացության 13(e) կետին համապատասխան, պարտավորվել է «անդամակցելուց հետո մեկ տարվա ընթացքում ստորագրել և *վավերացնել*¹ (ընդգծ. հեղ.) Տարածաշրջանային լեզուների և փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան», կարելի էր սպասել, թե հանրապետությունում ավելի որոշակի և առարկայական տեղեկատվություն կլիներ նշված խարտիայի նորմերը երկրի ներպետական կյանքում ներմուծելու իրական նախապատրաստության վերաբերյալ. հատկապես երբ խոսքը վերաբերում է «Դատական իշխանության» իրականացման և «Վարչական մարմինների ու պետական ծառայության» գործունեության ոլորտներում մեծաթիվ ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվի օգտագործման իրավունքներին (ըստ 1992թ. Եվրոպական խարտիայի հոդ. 8-ի և 9-ի): Ներպետական գործունեու-

¹ 2001թ. դեկտեմբերի 21-ին Ադրբեջանը ստորագրել է Տարածաշրջանային լեզուների և փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան, բայց մինչև օրս չի վավերացրել:

թյան մեջ Շրջանակային կոնվենցիայի (2002թ. հունիս) դրույթների իրականացման վերաբերյալ Ադրբեջանի վերջին զեկույցում ներկայացված տեղեկատվությունը զուրկ է դիտարկվող հարցի շուրջ որևէ որոշակիությունից: Այսպես, օրինակ, Շրջանակային կոնվենցիայի 10-րդ հոդվածի նորմերի ներմուծման վերաբերյալ զեկույցում բերվում են ընդհանուր ձևակերպումներ՝ հիմնականում հանրապետության ընթացակարգային օրենսդրությանը (քրեական և քաղաքացիական) հղում կատարելով:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության գծով ստանձնած պարտավորությունների իրական կատարման մասին պաշտոնական Բաքվի տրամադրած տեղեկությունները քիչ են տարբերվում սեփական գիտական շրջանակների քարոզչական թեզիսներից, որոնք հետազոտման առարկան կոնկրետ իրավաքաղաքական դաշտից տեղափոխում են ընդհանուր վերացական դատողությունների ոլորտ. «Ինչ վերաբերում է ազգային և էթնիկական փոքրամասնությունների լեզուներին, դրանց կարգավիճակին և կիրառման ոլորտներին, ապա Ադրբեջանում կան տարածաշրջանային լեզուների զարգացման ու համարժեք կիրառման բոլոր հնարավորությունները: Հռչակելով «այլ լեզուների ազատ կիրառումն ու զարգացումը, որոնցով խոսում է բնակչությունը», ադրբեջանական պետությունը ստեղծում է կրթության համակարգում, զանգվածային լրատվամիջոցներում, դատարանում, գործադիր իշխանության մարմիններում տարածաշրջանային լեզուների գործառնական բոլոր հնարավոր պայմանները: Լեզգի, քուրդ, թալիշ, վրացի, ռուս բնակչությամբ տարածքներում գործում են դպրոցներ ազգային փոքրամասնությունների լեզուներով, մեծ ուշադրություն է դարձվում այդ ժողովուրդների լեզուների և մշակույթների ուսուցմանը: Պետական ռադիոյի առաջին ալիքով հեռարձակվում են հաղորդումներ ազգային փոքրամասնությունների լեզուներով, տարածաշրջանային լրատվամիջոցների մի մասն ամբողջությամբ կամ մասամբ հրատարակվում է տեղի բնակչության լեզուներով: Թալիշ, լեզգի և թաթ բնակչությամբ վայրերում *նույնիսկ* գործում են Ադրբեջանի գրողների միության մասնաճյուղեր (ընդգծ. հեղ.), լույս են տեսնում դրանց գրական թերթերը: Այս ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները լավ են հասկանում հանրապետության պետական լեզվի նկատմամբ հարգալից վերաբերմունքի ամբողջ կարևորությունը և դրանում են տեսնում այստեղ ապրելու հեռանկարը» [10]:

Միանգամայն հիմնավորված հարց է առաջանում. «Ինչո՞ւ է Եվրոպայի խորհուրդն ընդունում նման քաղաքականացված զեկույցը, որը ոչ մի կապ չունի իրականության հետ» [11]:

Ներկայիս Ադրբեջանի այլ ազգային փոքրամասնությունների դրության մասին նշելով կարելի է բերել հետևյալ ընդհանուր տվյալները (օգ-

տագործվել են ադրբեջանցի փորձագետների նյութերը):

Ռուսները առաջին բնակավայրերն Ադրբեջանում ի հայտ են եկել XIXդ. 30-50-ական թթ., Տամբովի, Սարատովի, Վորոնեժի և այլ նահանգներից այլադավանների վերաբնակեցման արդյունքում: Այնուհետև ռուս բնակչության թիվը կտրուկ աճեց XIXդ. վերջին - XXդ. սկզբին, ինչը կապված էր քաղաքների աճի և արդյունաբերության (հատկապես նավթային) զարգացման հետ: Ռուս բնակչության հոսքը շարունակվում էր նաև խորհրդային իշխանության առաջին տասնամյակներին: XXդ. երկրորդ կեսից, սակայն, Ադրբեջանում նկատվում է ռուս բնակչության թվի կայունացում, իսկ այնուհետև՝ նաև կրճատում: Եթե 1939թ. մարդահամարով ռուսների թիվը հասնում էր առավելագույնի՝ կազմելով 530 հազար մարդ կամ հանրապետության ընդհանուր բնակչության 16,5%-ը, ապա 1989թ. նրանց թիվը նվազել էր մինչև 392 հազար կամ 5,6%: Հետագայում Ադրբեջանում ռուսների թվի կրճատման գործընթացն առավել ինտենսիվ դարձավ: 1999թ. մարդահամարի նախնական տվյալների համաձայն, ռուս բնակչության թիվը կրճատվել էր ավելի քան 2,5 անգամ՝ կազմելով ընդամենը 160-170 հազար, իսկ նրա տեսակարար կշիռն ընկել էր մինչև 2%:

Ազգային փոքրամասնությունների պաշտպանության վերաբերյալ Շրջանակային կոնվենցիայի (2002թ. հունիս) դրույթների կատարման մասին զեկույցում Ադրբեջանը ռուսական համայնքի թվաքանակը նշել էր 141,7 հազար մարդ, ովքեր «հոծ բնակչությամբ ապրում են արդյունաբերական քաղաքներում (Բաքու, Սումգայիթ), ինչպես նաև մի շարք գյուղական շրջաններում (Բամայիլի և Կեդաբեկի շրջաններ)»¹:

Այսօր տեղի ռուսների գերակշիռ մեծամասնությունն ապրում է երկրի մայրաքաղաք Բաքվում², ինչպես նաև խոշոր քաղաքներում՝ Գյանջայում, Սումգայիթում, Մինգեչաուրում և այլուր:

Խորհրդային Ադրբեջանի քաղաքներում, հատկապես Բաքվում, ծնելիությունը ցածր էր ոչ բուն ժողովուրդների, առաջին հերթին՝ ռուսների մեծաթվության պատճառով. նրանց ծնելիության ցուցանիշն ավելի ցածր էր, քան ադրբեջանցիներինը: 1970թ. վերջիններս կազմում էին հանրապետության ամբողջ բնակչության 73,8%-ը, իսկ քաղաքացիների՝ 60,8%-ը: Միևնույն ժամանակ, այդ նույն թվականին քաղաքաբնակ ադրբեջանցիների

¹ Report Submitted by Azerbaijan Pursuant to Article 25, Paragraph 1 of the Framework Convention For The Protection of National Minorities, Received on 4 June 2002.

² «Բաքուն քաղաք է, որ Սերգեյ Կիրովը ժամանակին ուզում էր Ադրբեջանի խորհրդային հանրապետությունից հանձնել Ռուսաստանին, որովհետև դա փաստորեն քաղաք էր, որտեղ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո անցած տարիներին ռուսախոս բաքվեցիները տոն էին տալիս այն աստիճանի, որ նրա ադրբեջանախոս բնակիչներն ամաչում էին խոսել մայրենի լեզվով» (Свентоховский Т., Русское правление, модернизаторские элиты и становление национальной идентичности в Азербайджане // Азербайджан и Россия: общество и государства (отв. ред. и сост. Фурман Д.), М., 2001, с. 48):

բաժինը 41,3% էր, իսկ 1979թ. ավելացավ մինչև 44,5%: Այդ ժամանակ ռուսները, որ հանրապետության հիմնական էթնիկական փոքրամասնություններից էին, գլխավորապես ապրում էին քաղաքներում, նախևառաջ՝ Բաքվում (Ադրբեջանի բոլոր ռուսների մինչև 75%-ը) [12]:

Ռուսական գյուղեր, որոնցում հիմնականում ապրում են մոլդկաններ, ավետարանչական քրիստոնյա բապտիստներ, պահպանվել են Բեյլագանի, Ջալիլաբադի, Իսմայիլի, Կեդաբեկի շրջաններում:

ԽՍՀՄ անկմամբ տեղի ռուսները կորցրին ոչ միայն տիրող ազգի՝ իրենց համար սովորական կարգավիճակը, այլև թվով ամենախոշոր էթնիկական մեծամասնությունը չէին այլևս: Սակայն ռուսների թիվը երկրում բացարձակ թվերով դեռևս բավական զգալի է, իսկ նրանց քաղաքական և մշակութային նշանակությունը, հաստատված ավանդույթներից, աշխարհագրական մերձավորությունից ու Ռուսաստանի իրական քաղաքական դերից (իսկ ավելի շատ՝ տեղի բնակչության գիտակցության մեջ պահպանված՝ այդ դերի չափազանցված պատկերացումներից) ելնելով, բավականաչափ մեծ է: ԽՍՀՄ փլուզումից հետո ռուս բնակչությունը հայտնվեց երկրի քաղաքական կյանքից որոշակի չափով մեկուսացված վիճակում: Ռուսական համայնքի ներկայացուցիչների մասնակցությունը երկրի քաղաքական կյանքին այդ ժամանակահատվածում ձեռք բերեց էպիզոդիկ բնույթ: Նույնիսկ այժմ Ադրբեջանում ապրող ռուսների հասարակական ակտիվությունը բարձր չէ: Գոյություն ունեն մի քանի հասարակական և մշակութային միավորումներ («Համագործակցություն», Սլավոնական մշակույթի կենտրոն և այլն): Ռուս բնակչության շահերի ու պահանջների մասին հրապարակավ չի հայտարարվում: Իշխանություններին և քաղաքական ուժերին դրանք հասնում են ավելի շուտ ցանկությունների տեսքով և գաղտնաբար: Դրանք կարող են վերաբերել ԱՊՀ շրջանակներում Ադրբեջանի և Ռուսաստանի միջև առավելագույնս սերտ կապերի հաստատման, ռուսերենին, ադրբեջաներենի հետ հավասար, պաշտոնական լեզվի կարգավիճակ տալու, երկակի քաղաքացիության թույլատրման և այլ առաջարկություններին:

1990-ական թթ. կեսերին Ռուսական Ուղղափառ եկեղեցու սրբազան սինոդի որոշմամբ վերաբացվեց ինքնուրույն Կասպյան թեմը, որի կենտրոնը Բաքվում է: Ադրբեջանում ռուսերենով հրատարակվում են մոտ մեկ տասնյակ թերթեր և ամսագրեր: Քաղաքներում և նույնիսկ որոշ գյուղական շրջաններում պահպանվել է դպրոցների լայն ցանցը (մոտ 200), որտեղ ուսուցումն անցկացվում է ռուսերենով: Ավելի քան 20 բուհերում գործում են բազմաթիվ ռուսական բաժիններ:

1989թ. մարդահամարի տվյալներով՝ Ադրբեջանում ապրում են *ուղիների* 6,1 հազար ներկայացուցիչներ, որոնց մեծ մասը բնակվում է Ղաբա-

լայի շրջանի Նիջ բնակավայրում: Մյուսներն ապրում են Օդուզ շրջկենտրոնում: Ուղիների լեզուն մոտ է լեզգիների լեզվին: Ուղիները (ինքնանվանումը՝ ուտի) ծագել են հնագույն աղվանական ուտի ցեղից, ինչը վկայում է նրանց բնիկության մասին: Ուղիները քրիստոնյա են, ընդ որում՝ հայ-գրիգորյանական: Այս պատճառով շատ ուղիների անուն-ազգանուններ, կենցաղի որոշ տարրեր, ծեսեր հայկականացվել են: Գործում է ուղիների ազգային-մշակութային կենտրոնը, որն աշխատանքներ է տանում ուղիական լեզվի դասագրքերի ստեղծման, աղբբեջանական և համաշխարհային գրականության դասականների ստեղծագործությունները թարգմանելու ուղղությամբ: Ուղիների հոգևոր համայնքը կապ է պահպանում Դոնի Ռոստովում գտնվող Հյուսիսկովկասյան հայ թեմի հետ:

Էթնիկական համակեցության հետաքրքրական օրինակ են *ինգիլոյները*: Նրանք ապրում են Աղբբեջանի հյուսիսարևմտյան մասում, Բելոկան, Ջաքաթալա (մահմեդականներ) և Կախի (քրիստոնյաներ) շրջանների գյուղերում:

Խորհրդային պաշտոնական վիճակագրության մեջ այս ժողովուրդը կարծես ընդհանրապես չի էլ եղել: Բանն այն է, որ մահմեդական ինգիլոյները մարդահամարների ժամանակ իրենց նույնացնում են աղբբեջանցիների, իսկ քրիստոնյա ինգիլոյները՝ վրացիների հետ: 1989թ. մարդահամարի համաձայն՝ վերջիններիս թիվը կազմում էր 14,2 հազար մարդ¹: Նրանք խոսում են վրացերենի արևելյան բարբառներից մեկով:

Աղբբեջանի հյուսիս-արևելքում հնուց ի վեր ապրում են դադստանալեզու էթնոսների մեծ խմբեր. լեզգիներ, ավարներ, ծախուրներ և այլք: Նրանցից շատերը բնակություն են հաստատել Բաքվում և երկրի այլ քաղաքներում: Լեզգիները, ավարները և ծախուրները սուննի մահմեդականներ են², ինչպես և երկրի հյուսիսում նրանց կողքին ապրող աղբբեջանցիները: Դադստանալեզու էթնոսների ներկայացուցիչների մեծամասնությունն ազատ տիրապետում է աղբբեջաներենին: Շատ տարածված են աղբբեջանցիների հետ խառն ամուսնությունները:

Ավարները լեզգիներից հետո թվով երկրորդ դադստանալեզու էթնիկական հանրույթն են Աղբբեջանում: 1989թ. մարդահամարի տվյալներով՝ նրանց թիվը կազմում էր 44,1 հազար մարդ կամ երկրի ընդհանուր բնակչության 0,6%-ը: 1999թ. մարդահամարի տվյալներով՝ ավարների տեսակարար կշիռը չի փոխվել, իսկ թվաքանակը հասել է 50 հազար մարդու: Նրանք բնակություն են հաստատել հիմնականում երկու շրջաններում՝ Բելոկանի

¹ Եվրոպայի խորհրդին ներկայացված զեկույցում (2002թ. հունիս) նշված է 14,9 հազար թիվը, ընդ որում՝ փաստաթղթում խոսվում է ոչ թե *ինգիլոյների*, այլ վրացիների մասին:

² Նշված ժողովուրդների մեջ կան և շիա մահմեդականներ:

և Ջաքարալայի: Այստեղ են գտնվում հարուստ պատմություն ունեցող ավարական խոշոր գյուղերը՝ Ջարը, Ծիլիբանը, Մածեխը և այլն: Բոլոր ավարների գրեթե 90%-ը բնակվում է ՌԴ Դաղստանի Հանրապետությունում: Այստեղ դարգինների հետ միասին նրանք առաջնային դերակատարություն ունեն քաղաքական և տնտեսական կյանքում: Բելոկան-Ջաքարալա գոտում ավարների հայտնվելու ժամանակի հարցը գիտնականները մինչև վերջ դեռևս չեն պարզել: Համենայնդեպս, ավարներն այս տարածքում վերջնականապես հաստատվել են XVIդ. սկզբում: Հենց այդ ժամանակ էլ առանձին ավարական համայնքները միավորվում էին, այսպես կոչված, ջամահաթներում, որոնք ավագանու և զորահրամանատարների կողմից կառավարվող ազատ համայնքների յուրատեսակ դաշնություն էին: Ջար-Բելոկանի ջամահաթները՝ որպես ռազմաքաղաքական միավորներ, պահպանեցին իրենց գոյությունն ընդհուպ մինչև 1830թ. ռուսական նվաճումը:

Ավարական համայնքի շահերն արտահայտելու նպատակով ստեղծվել է շեյխ Շամիլի անվան ընկերությունը, որը վերջին ժամանակներս ակտիվությամբ առանձնապես աչքի չի ընկնում:

Ավարների կողքին Ջաքարալայի շրջանում ապրում է ևս մեկ դաղստանալեզու էթնոս՝ *ճախուրները*: 1989թ. մարդահամարի տվյալներով նրանց թիվն այստեղ 13,3 հազար է: Այս էթնիկական խմբի տեսակարար կշիռը 1926թ. 0,7%-ից նվազել է մինչև 0,2%-ի՝ 1989թ.: 1999թ. մարդահամարով նրանց թիվը մոտ 15 հազար է: Նրանք հոծ բնակությամբ ապրում են Ջաքարալայի շրջանում: Հաղորդակցման լեզուն ճախուրերենն է, որը պատկանում է Կովկասյան լեզուների դաղստանյան լեզվաճյուղի հարավարևելյան խմբին: Ազատ տիրապետում են նաև ադրբեջաներենին:

Ծախուրների ազգաձագման մասին տարբեր կարծիքներ կան: Վարկածներից մեկի համաձայն՝ նրանք ծագում են ադվանական ջիզբա ցեղից, որոնց բնակության տարածքն ընդգրկում է ոչ միայն հյուսիսային Ադրբեջանը, այլև հարավային Դաղստանը: Պատմական աղբյուրներից հայտնի է, որ ավելի քան չորս դար առաջ Սամուր գետի կիրճերից մեկում գտնվող Ծախուրի բնակիչները, անցնելով Կովկասյան լեռնաշղթայի արևմտյան լանջերը, հիմնեցին Սարիբաշ ավանը: Ավելի ուշ նրանք հիմնեցին նաև Իլիսուն, որը դարձավ Իլիսուի սուլթանության կենտրոնը: Ծախուրների և ադրբեջանցիների կապերը սերտ են և ամուր, սերտաճումն ադրբեջանական հասարակությանն այնքան մեծ է, որ խիստ դժվար է առանձնացնել այս էթնիկական խմբին առանձնահատուկ քաղաքական, սոցիալական և մշակութային խնդիրներ: Իսկ առկա խնդիրներն ունեն տեղական և ոչ թե համահանրապետական բնույթ:

Ադրբեջանի հյուսիսարևելյան գոտում՝ Ապշերոնի, Խիզալի, Դիվիչին-

սկի, Ղուբայի շրջաններում ապրում են ոչ մեծաթիվ ժողովրդի՝ *թաթերի* խմբեր: Նրանց թիվը մոտ 11 հազար է, հոծ բնակությամբ ապրում են Խաչմազի և Դիվիչինսկի շրջաններում (1989թ. մարդահամարի տվյալներով՝ թաթերը 10 հազարից մի փոքր ավելի էին): Հաղորդակցման լեզուն թաթերենն է, որը պատկանում է իրանական լեզվախմբին, ինչպես նաև աղբբեջաներենը: Նրանք իրանալեզու բնակչության ուղղակի հետնորդներն են, որոնք դեռևս IVդ.¹ Սասանյանների կողմից վերաբնակեցվել էին Աղբբեջանի մերձկասպյան շրջաններում:

Ներկայումս ընդունված կարծիքի համաձայն՝ «թաթ» հասկացությունն ի սկզբանե կոնկրետ էթնոնիմ չէր: Թյուրք քոչվորներն այն օգտագործում էին Իրանի և ամբողջ Միջին Արևելքի նստակյաց, հողագործ բնակչության վերաբերյալ: Աղբբեջանում թաթերի առանձին խմբեր այսօր էլ նախընտրում են իրենց անվանել դադլիներ, պարսեր, լահիջամներ և այլն:

Հարկ է նշել, որ «թաթ»-ը նվաճված նստակյաց բնակչության (գլխավորապես՝ իրանցի) թյուրքական ընդհանրացված անվանումն է, ընդ որում՝ այդ տերմինն ավելի շուտ սոցիալական է, քան էթնիկական: Հենց այսպես էլ նրանք հայտնի են Կենտրոնական Ասիայում, Ղրիմում, Իրանի հյուսիսարևմուտքում և Արևելյան Կովկասում: Թյուրք-աղբբեջանցիները թաթ էին անվանում Արևելյան Կովկասի իրանցիներին, որոնց նախնիներին Իրանի տիրակալները վերաբնակեցրել էին այս տարածքներում VIդ.: Նրանք հոծ բնակություն էին կազմում հարավում՝ Ապշերոնից մինչև հյուսիսում՝ Դերբենտը: XX դարասկզբին նրանց թիվը հասնում էր մի քանի հարյուր հազարի [13]: Նրանք իրենց թաթ չէին անվանում՝ այդ անվանումը վիրավորական համարելով: Իրենց լեզուն անվանում էին *պարսի, պորսի կամ Ֆորսի* [14]:

«Թաթ» էթնոնիմի տակ խորհրդային մարդահամարների ժամանակ գրանցվում էին գլխավորապես մահմեդական թաթերը: Կովկասյան թաթերի թյուրքացումը սկսվեց XIXդ. վերջին: Մեր օրերում այդ գործընթացը գործնականում ավարտվել է, իսկ Աղբբեջանում և Դաղստանում ապրող գրեթե բոլոր թաթերն այսօր չեն խոսում մայրենի պարսկերենով և հաղորդակցվում են աղբբեջաներենով: Ընդ որում՝ նրանք իրենց նույնացնում են աղբբեջանցիների հետ [14, c. 195]:

Մահմեդական թաթերը, հատկապես հանրապետության քաղաքներում մշտական բնակություն հաստատածները, ենթարկվել են ինտենսիվ ուժացման: Նրանց մեծ մասն այսօր իրեն աղբբեջանցի է համարում և չգիտի մայրենի թաթերենը: Այս էթնիկական խմբի համախմբվածության մակար-

¹ Թաթերի վերաբնակեցման սկիզբը IV դարին վերագրելն առավել տարածված է ազգագրագետների շրջանում: Թաթերի ազգածագման որոշ հայտնի հետազոտողներ (օր. Բ.Միլլերը) կարծում են, որ ներկայիս Աղբբեջանի և Դաղստանի տարածքներում թաթերի զանգվածային վերաբնակեցումն սկսվել է VI դարում:

դակը չափազանց ցածր է: Ադրբեջանի մշակույթի հիմնադրամին կից դեռևս 1980-ական թթ. վերջերին-90-ական թթ. սկզբին ստեղծված՝ թաթերի «Ազերի» հասարակական միավորումն ակտիվությամբ աչքի չի ընկնում:

Հետաքրքիր է, որ Արևելյան Անդրկովկասում բնակվում էին նաև թաթախոս հայեր, որոնց նախնիները դեռ վաղ միջնադարում այստեղ հաստատված հայ ռազմական վերաբնակներն են:

Այս խմբի վերջին ներկայացուցիչները (որոնք ապրում էին պատմականորեն ձևավորված իրենց արեալում) 1988թ. բռնի տեղահանվեցին Ադրբեջանից և այսօր հիմնականում ապրում են Հայաստանում և Հյուսիսային Կովկասում¹:

Ադրբեջանի էթնիկական խճապատկերում նշանակալի տեղ են գրավում *հրեաները*: Այս խումբը բաժանվում է լեռնցի հրեաների (քանի որ նրանք խոսում են թաթերեն, նրանց երբեմն անվանում են նաև հրեա-թաթեր), որոնք ապրում են այստեղ անհիշելի ժամանակներից, և եվրոպական հրեաների՝ աշքենազի, որոնց այստեղ հայտնվելը կապում են Ռուսաստանի կողմից Կովկասի գաղութացման սկզբի հետ: Խորհրդային ժամանակների մարդահամարներն առանձին գրանցում էին լեռնցի հրեաներին և մնացած բոլոր (ներառյալ վրացական, միջինասիական և դրիմյան) հրեաներին:

Ադրբեջանում լեռնցի հրեաների հայտնվելու վերաբերյալ մասնագետներն առաջ են քաշում տարբեր վարկածներ: Ոմանք նրանց համարում են իրանալեզու ցեղ, որոնք շատ դարեր առաջ խազարներից ընդունել են հուդայականություն: Ոմանց կարծիքով էլ նրանք հրեաներ են, որոնք երկար ժամանակ ապրել են իրանախոս միջավայրում և փոխառել են այդ լեզուն:

Լեռնցի հրեաներ հասկացությունը շրջանառության մեջ են մտցրել ռուս զինվորականները XIXդ.: Դա բացատրվում էր արևելակովկասյան հրեաներին եվրոպականներից տարբերելու անհրաժեշտությամբ: Ընդ որում՝ «լեռնցի» որոշիչը կապված էր այն բանի հետ, որ այդ ժամանակ ռուսական զինվորական վարչակազմի պաշտոնական գրանցամատյաններում բոլոր կովկասյան ժողովուրդները, անկախ իրենց ավանդական բնակության գոտուց, անվանվում էին *լեռնաբնակ*: Այդ ժամանակ էլ «լեռնցի հրեաներ» բառակապակցությունը մտավ ազգագրական գրականություն և խորհրդային իշխանության օրոք, երկար ժամանակ, այդ ժողովրդի պաշտոնական անվանումն էր [14, c. 193]:

Ինչպես հետխորհրդային ամբողջ տարածքում, Ադրբեջանում նույնպես վերջին մի քանի տասնամյակներին նկատվում էր հրեաների թվի կրճատման միտում՝ կապված Իսրայել և արևմտյան երկրներ նրանց եռան-

¹ Մանրամասն տե՛ս Ա.Հակոբյան, «Թաթախոս հայեր. պատմաազգագրական հետազոտություն», Ե., 2002թ., պատմ. գիտ. թեկնածուի կոչման ատենախոսություն:

դուն արտահոսքի հետ:

Հրեաների թիվն Ադրբեջանում 1939թ. առավելագույն՝ 41,2 հազար մարդուց 1989թ. նվազել է մինչև 25,3 հազարի: Նրանց տեսակարար կշիռը համապատասխանաբար 1,3-ից նվազել է մինչև 0,4%-ի: 1999թ. մարդահամարի տվյալներով՝ հրեաների թիվն էլ ավելի է կրճատվել՝ ավելի քան կրկնակի, և հաշվվում է մոտ 9 հազար մարդ: Չնայած 1979 և 1989թթ. մարդահամարների տվյալների համեմատությունն անսպասելիորեն ցույց տվեց, որ լեռնցի հրեաների թիվն ավելի քան կրկնակի ավելացել է (2,1 հազար մարդուց մինչև 6,1 հազարի), իրականում, սակայն, դա ընդամենը անկատար վիճակագրության արդյունք է, քանի որ քաղաքներում ապրող լեռնցի հրեաներին ավելի վաղ, նրանց կամքին հակառակ, հաշվառում էին որպես պարզապես հրեաներ:

Ադրբեջանի հյուսիս-արևելքում, Ղուբա քաղաքի մերձակայքում գտնվող Կրասնայա սլոբոդա ավանը, որտեղ ապրում է լեռնցի հրեաների հիմնական մասը, վերջին ժամանակներս զգալիորեն զարգացել է: Սակայն նրա հասուն բնակչության մեծ մասը զբաղված է բիզնեսով երկրի սահմաններից դուրս և հայրենիք է գալիս միայն տոներին, արձակուրդներին և ընտանեկան հանդիսություններին: Ի տարբերություն Բաքվում ապրող իրենց եվրոպական ազգակիցների, որոնք գլխավորապես ռուսախոս են, գրեթե բոլոր լեռնցի հրեաները ազատ տիրապետում են ադրբեջաներենին և հաճախ հաղորդակցվում են այդ լեզվով:

Չնայած տեղի հրեաները մեծաթիվ չեն, սակայն զգալի հետք են թողել Ադրբեջանի մշակույթի, գիտության և կրթության զարգացման գործում:

1990թ. հիմնվում են «Ադրբեջան-Իսրայել» բարեկամության, ինչպես նաև «Սոխնութ» ընկերությունները: Ադրբեջանի բուհերում անցկացվում է «Թանախի լեզու» հատուկ դասընթացը: Բացվում է եբրայերենի բաժինը Բաքվի Ռասուլզադեի անվան պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում: 1989թ. հրեա երիտասարդների խմբի նախաձեռնությամբ բացվում է «Ալեֆ» ակումբը: Այստեղ մշտապես սկսում են գործել եբրայերենի դասընթացներ. ստեղծվում են հուդայականության և հրեական մշակույթի ասոցիացիան, հայրենադարձության կենտրոնը: «Ալեֆ» ակումբն աջակցում էր հրեական կիրակնօրյա «Ալեֆ» դպրոցին: Սակայն միջոցների անբավարարության պատճառով 1999թ. սկզբին դպրոցը փակվեց: Այսպիսով, Ադրբեջանում ժողովրդավարացման շնորհիվ հրեաները ինքնադրսևորվելու գրեթե անսահմանափակ հնարավորություններ ստացան: Սակայն «պերեստրոյկայից» ու ԽՍՀՄ փլուզումից հետո ստեղծված անկայուն քաղաքական իրավիճակն ու տնտեսական անկումը հանգեցրին հրեաների արտագաղթին դեպի ավելի բարեկեցիկ երկրներ [15]:

Ներկայումս հանրապետությունում գործում են մի քանի սինագոգ,

միջազգային հրեական «Սոխնույթ» կազմակերպության բաժանմունքը, «Ադրբեջան-Իսրայել» ընկերությունը: Միննույն ժամանակ, հրեական համայնքների թվաքանակի խիստ կրճատումը բացասաբար է անդրադառնում երկրի մշակութային, տնտեսական և հասարակական կյանքում նրանց ունեցած ազդեցության վրա: Քաղաքական կուսակցությունների գործունեությանը նրանք գրեթե չեն մասնակցում. միայն աշքենազի հրեաների համայնքի վարչության նախագահ Մոշե Բեքերն է, որ ընտրվել է «Ենի Ադրբեջան» իշխող կուսակցության գործկոմի կազմում:

Ադրբեջանում ապրում են նաև զգալի թվով *թաթարներ*: Նրանց մեջ կան ինչպես դրիմյան, այնպես էլ Կազանի, Նոդայի ու Աստրախանի թաթարներ: 1989թ. մարդահամարի տվյալներով՝ նրանց ընդհանուր թիվը (մարդահամարի տվյալներով՝ թաթարական առանձին էթնոսներն ու էթնիկական խմբերը տարբերակված չեն) կազմում է 28,6 հազար: Այդ թիվը գրեթե չէր փոփոխվել 1999թ. մարդահամարի ժամանակ: Ադրբեջանում թաթարների հայտնվելը կապվում է XVI-XVIIդդ. սեֆյան-օսմանյան պատերազմների հետ, որոնց թուրքերի կողմից մասնակցում էին Ղրիմի գիրեյները: Այնուհետև թաթարների թիվն ավելացել է ի հաշիվ տնտեսական միգրացիայի՝ Բաքվում նավթարդյունաբերության զարգացման հետ կապված: Գրեթե բոլոր ադրբեջանական թաթարները քաղաքաբնակ են:

Խիստ ուժացման ենթարկվելով՝ թաթարներն, այնուամենայնիվ, կարողացել են բավական չափով պահպանել էթնիկական ինքնագիտակցությունը: Այժմ Բաքվում գործում են ազգային-մշակութային «Թուղան թել» կենտրոնը, թաթարական ժողովրդական երգի-պարի համույթը, ամեն տարի նշվում է «Մաբանտույ» ազգային տոնը [7]:

Մինչև 1941թ. Ադր. ԽՍՀ-ում կար նաև *գերմանական* ազգային փոքրամասնություն, չնայած այս էթնոսին պատկանող անձանց թիվը չէր գերազանցում հանրապետության ընդհանուր ազգային բնակկազմի 1%-ը. «Մեր հանրապետության գերմանացիների պատմության վերջին և բավական ողբերգական էջը դարձավ բռնի տեղահանումը, որը վերջ դրեց նրանց գոյությանը, զարգացմանն ու կենսագործունեությանը Ադրբեջանի տարածքում»: Այստեղ տեղին է նշել, որ մինչպատերազմյան վերջին՝ 1939թ. մարդահամարի արդյունքներով՝ Ադրբեջանում ապրում էին 23.133 գերմանացիներ (բնակչության ընդհանուր թվի 0,7%-ը): Բռնի տեղահանումն իրականացվեց հետևյալ կերպ. 1941թ. հոկտեմբերի 8-ին Պաշտպանության պետական կոմիտեն ընդունեց որոշում (N744cc) «Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի ԽՍՀ-ներից գերմանացիների վերաբնակեցման մասին», որում նշվում էր. «Վերաբնակեցնել գերմանացի բնակչությանը Վրաստանի ԽՍՀ-ից՝ 23.580 մարդ, Ադրբեջանի ԽՍՀ-ից՝ 22.741 մարդ, Հայաստանի ԽՍՀ-ից՝ 212 մարդ» [16]:

Վերոնշյալից ելնելով՝ կարելի է արձանագրել, որ ազգային փոքրամասնությունների թվաքանակի իջեցումը, Ադրբեջանում նրանց դրությունն անխնդիր կամ գրեթե անխնդիր ներկայացնելը դարձել է սովորական, ինչը ներկայիս ԱՀ-ն ժառանգել է նախկին Ադր. ԽՍՀ-ից: Այսպես, օրինակ, Ադրբեջանի ոչ կիսապաշտոնական փորձագետները լեզգիների վերաբերյալ նշում են, թե «ըստ պաշտոնական վիճակագրության¹՝ երկրում ապրում են 178 հազար լեզգիներ, ինչը կազմում է բնակչության 2%-ը: Սակայն իրականում նրանց թիվը կարող է շատ ավելի մեծ լինել: Սրան համաձայն է նաև փորձագետ Արիֆ Յունուսովը, որի կարծիքով՝ լեզգիների թիվն Ադրբեջանում տատանվում է 250-260 հազարի միջակայքում: Խորհրդային ժամանակներում շատ լեզգիներ թաքցնում էին իրենց էթնիկական արմատները՝ փորձելով օգտվել կրթական և սոցիալական ծրագրերից, որոնցից օգտվելու իրավունք, ինչպես լեզգիներն էին կարծում, նրանք չունեին: Լեզգիների համայնքի առջև ծառայած որոշ հիմնախնդիրներ բնորոշ են նաև Ադրբեջանի հեռավոր այլ շրջաններին. անհրաժեշտ չափով զարգացած չեն ենթակառուցվածքներն ու արդյունաբերությունը, առկա է աշխատատեղերի անբավարարություն: Սակայն կան նաև սեփական մշակույթը, պատմությունն ու լեզուն պահպանելու հետ կապված հիմնախնդիրներ: Լեզգիների մայրենի լեզուն խիստ տարբեր է ադրբեջաներենից: Լեզգիերենի ուսուցումը դպրոցներում օտար լեզուների՝ անգլերենի կամ ռուսերենի ուսուցման մակարդակի է, ընդ որում՝ կիրառվում են դասագրքեր, որոնք բերվել են Ռուսաստանից և բոլորովին չեն համապատասխանում տեղի պայմաններին: Ուստի ավելի ու ավելի սակավաթիվ լեզգիներ են խոսում մայրենի լեզվով, մինչդեռ լեզուն բանավոր պատմություն է ու մշակույթ: Ժողովրդական բանաստեղծուհի և լեզգիալեզու «Սամուր» թերթի գլխավոր խմբագիր Սեդազեթ Քերիմովան ասում է, որ այդ ավանդույթն օրեցօր վերանում է» [17]:

Առանց ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրները լուծելու՝ Ադրբեջանը երբեք ժողովրդավարական պետություն չի դառնա: Այսպիսի կարծիք է արտահայտվել Թալիշների ազգային շարժման (ԹԱՇ) դիմումում՝ արված 2006թ. փետրվարի 21-ին՝ մայրենի լեզվի միջազգային օրվա կապակցությամբ, որն ամեն տարի նշվում է ՄԱԿ-ի կողմից, ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնությամբ: «Ադրբեջանը բազմազգ երկիր է, և ժողովրդավարության համար պայքարն այստեղ, բնականաբար, ենթադրում է այստեղ ապրող յուրաքանչյուր ժողովրդի իրավունքների վերականգնում և պաշտպանություն», - ասվում է դիմումում: Սակայն, ԹԱՇ ներկայացուցիչների կարծիքով, Ադրբեջանում անկախության տարիների ընթացքում, ազգային

¹ «Հնդհանրապետ Ադրբեջանի վերաբերյալ վիճակագրությունը աչքի չի ընկնում ճշմարտացիությամբ, հակասական է և խճողված» [19, c. 210]:

փոքրամասնությունների իրավունքների իրականացման ասպարեզում կուտակվել են բազմաթիվ չլուծված խնդիրներ: Դիմումում նշվում է, որ թալիշ ժողովուրդն այսօր Ադրբեջանում գրկված է մայրենի լեզվով սովորելու և կրթություն ստանալու հնարավորությունից: «Չնայած թալիշ մտավորականների այս խնդիրը լուծելու ուղղությամբ որոշակի քայլեր ձեռնարկելու բազմաթիվ պահանջներին՝ միայն տարրական՝ 2-րդ և 4-րդ դասարաններում է, այն էլ ֆակուլտատիվ հիմունքներով, դասավանդվում թալիշերենը: Երկրում ոչ մի բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն չի պատրաստում թալիշական բանասիրության մասնագետներ և ուսուցիչներ», - ընդգծվում է փաստաթղթում: Դիմումի հեղինակները դժգոհում են, որ թալիշներն Ադրբեջանում չունեն մայրենի լեզվով էլեկտրոնային, տպագիր, հեռուստատեսային լրատվամիջոցների իրավունք: Ինչպես երևում է փաստաթղթից, այսօր երկրում մեկամսյա պարբերականությամբ լույս է տեսնում միայն մեկ թալիշերեն թերթ: Շաբաթը 2 անգամ, 15 րոպե տևողությամբ, ռադիոհաղորդումներ են տրվում թալիշերենով: ԹԱՇ ակտիվիստները պահանջում են թալիշերենը որպես պաշտոնապես դասավանդվող առարկա, մտցնել թալիշական շրջանի և թալիշներով հոծ բնակեցված վայրերի միջնակարգ դպրոցների հանրակրթական ծրագրերում, բուհերում և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում պատրաստել թալիշերենի մասնագետներ, հանրակրթական դպրոցների և բուհերի համար պատրաստել և հրատարակել դասագրքեր թալիշերենով: Առաջարկվում է նաև Լենքորանի և Բաքվի պետական համալսարաններում բացել թալիշերենի և թալիշ ժողովրդի պատմության ամբիոններ: Ցանկություն է հայտնվում թալիշական շրջանում թալիշերենով ռադիո- և հեռուստատեսային բացելու մասին [18]:

Թալիշական սփյուռքի ակտիվիստները պահանջում են անցկացնել երկրի բնակչության մարդահամար: Դիմումը ստորագրողների կարծիքով այս ամենը թալիշ ժողովրդին թույլ կտա ավելի ակտիվ մասնակցություն ունենալ շրջանի մշակութային, տնտեսական և քաղաքական կյանքին: «Եթե նույնիսկ հավատալու լինենք թալիշների 76,8 հազար լինելու զավեշտալի թվին, միննույն է, անհասկանալի է, թե ինչու ադրբեջանական վրացիները (14,9 հազ.) կամ հրեաները (8,9 հազ.) ունեն միջնակարգ դպրոցներ, իսկ թվով նրանց պաշտոնապես գերազանցող թալիշները՝ ոչ: Ռուսներն Ադրբեջանում 141,7 հազար են, և նրանք անգամ բարձրագույն կրթություն են ստանում իրենց լեզվով, իսկ լեզգիները, որ 178 հազար են (կրկին պաշտոնական թիվն ենք նշում), նույնիսկ միջնակարգ կրթական հաստատություն չունեն Ադրբեջանում: Մի թե նման արդարությունը պայմանավորված է նրանով, որ Ադրբեջանի տարածքում ապրող ինչ-որ ազգերի թիվունքին

կանգնած են այս կամ այն պետությունները, իսկ թալիշների թիկունքին այդպիսի պետություն չկա» [18]:

Ադրբեջանի ռուսական համայնքի ներկայացուցիչները նույնպես լիովին բավարարված չեն իրենց և այլ ազգային փոքրամասնությունների ընդհանուր դրությամբ: 2005թ. արվեցին Ադրբեջանի խորհրդարանում ազգային փոքրամասնությունների տեղերի թիվն ավելացնելու առաջին փորձերը, սակայն երկրի կառավարությունն այդ փոփոխություններն անհրաժեշտ չհամարեց: Պատգամավոր Վլադիմիր Տիմոշենկոյի կարծիքով (ազգությամբ ռուս)¹ առաջարկվող փոփոխությունները կարող էին իրապես բարելավել ազգային փոքրամասնությունների դրությունն Ադրբեջանում. «Որևէ մեկի համար գաղտնիք չէ, որ փոքրամասնությունների իրավունքները ոտնահարվում են, թեև դա փորձում են քողարկել բոլորի համար ընդհանուր սոցիալ-կենցաղային խնդիրներով» [17]:

Ըստ պաշտոնական տվյալների՝ 1990-92թթ., քաղաքական անկայուն իրադրության ժամանակահատվածում, հանրապետությունից հեռացան 169 հազար ռուսներ, 150 հազար ուկրաինացիներ, 3 հազար բելառուսներ: Այնուհետև հեռանում էին նաև տնտեսական ճգնաժամի պատճառով [19, c. 211]:

1998թ. հունվարի 23-ին ՌԴ Պետդուման վավերացրեց Ռուսաստանի Դաշնության և Ադրբեջանի Հանրապետության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին պայմանագիրը: Մինչև պայմանագրի վավերացումը տրվել էին հետևյալ փորձագիտական գնահատականներն ու եզրակացությունները, որոնց մի մասն անմիջականորեն առնչվում է մեր հետազոտությանը: Ընդհանուր առմամբ, արտահայտվում էր այն միտքը, թե կան «հիմքեր ենթադրելու, որ դրա (պայմանագրի- *հեղ.*) ընդունումը Պետդումայի կողմից տեղի է ունեցել ռուսաստանյան գործադիր իշխանության ճնշմամբ և շահագրգիռ լոբբիստական կառույցների (ինչպես էթնիկական, այնպես էլ գործարար, որոնք «կառչել» էին նավթախողովակից) ակնդետ ուշադրության ներքո» [20]:

ՌԴ Պետդումայի՝ ԱՊՀ գործերի և հայրենակիցների հետ կապերի կոմիտեի անդամների կարծիքով՝ «Պայմանագրի ներածականում հռչակված՝ իր տարածքում ժողովրդավարական իրավական պետություն կառուցելու վճռականությամբ համակվելը հարկադրում է անդրադառնալ մեր երկրների միջև հարաբերություններում առկա հիմնախնդիրների համախմբին: Առաջին հերթին դրանց թվին կարելի է դասել ազգային փոքրամաս-

¹ Ադրբեջանցի այլ փորձագետներ նշում են, թե Վ.Տիմոշենկոն ուկրաինացի է. «... այն ժամանակ, երբ ռուս սպաների գերակշիռ մեծամասնությունը, որ ծառայում էր Ադրբեջանում տեղակայված խորհրդային զորամասերում, գերադասեց հեռանալ երկրից, շատ ուկրաինացի սպաներ մնացին և օգնեցին ձևավորել Ադրբեջանի ազգային բանակը: Նրանցից մեկը՝ գեներալ Տիմոշենկոն, ընտրվել է Միլի մեջլիսի պատգամավոր» [7]:

նությունների և տարանջատված ժողովուրդների (ավարներ և լեզգիներ) հիմնախնդիրները, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների և Ադրբեջանում մշտապես բնակվող ռուս հայրենակիցների, ինչպես նաև ռուսաց լեզվի հիմնախնդիրները: Ադրբեջանական կողմն արդեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ապահովման կոնվենցիան ստորագրելիս վերապահում էր արել կոնվենցիային իր մասնակցության մասին այն ծավալով և այն սահմաններում, որոնք չեն հակասում Ադրբեջանի Հանրապետության սահմանադրությանն ու ազգային օրենսդրությանը¹, բայց անգամ այս վերապահումով կոնվենցիան մինչև օրս չի անցել ներպետական բոլոր ընթացակարգերը և կիրարկման մեջ չի մտել: Պայմանագրում հռչակված ազգային փոքրամասնությունների իրավունքները (հոդված 10)՝ կապված Ադրբեջանի ներքին օրենսդրության հետ, գործնականում դուրս չեն գալիս մշակութային ինքնավարության շրջանակներից: Պաշտոնական տվյալներով՝ Ադրբեջանի Հանրապետության կառավարությունում ներկայացված են միայն ադրբեջանցիները:

Ռուսաստանի քաղաքացիների իրավունքների պաշտպանության ապահովումը, ներառյալ քաղաքացիության իրավունքի ձեռքբերումը (պայմանագրի 9-րդ և 11-րդ հոդվածներ) վերագրվել են այն համաձայնագրերի գործառնական ոլորտներին, որոնք կնքվելու են: Ուստի Ռուսաստանի կողմից դրվում է նման քայլի նպատակահարմարության հարցը՝ հաշվի առնելով Ադրբեջանում իրավունքների կիրառման պրակտիկան: Ադրբեջանից Ռուսաստանի քաղաքացիների և հասարակության կյանքի բոլոր ոլորտներից ռուսերենի աստիճանական դուրսմղման գործելակերպն անհրաժեշտ է դարձնում, որպեսզի Ռուսաստանը հենց այս ուղղությամբ կենտրոնացնի արտաքին քաղաքական ջանքերը Ադրբեջանի հետ հարաբերություններում:

Ռուս-ադրբեջանական հարաբերություններում առկա լարվածության խորացումը կանխելու համար սույն պայմանագրի վավերացմանը պետք է նախորդի արձանագրության մշակումը, որում իրավաբանորեն պարտադրող կերպով պետք է ամրագրվեն Ռուսաստանի և Ադրբեջանի դիրքորո-

¹ Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ապահովման 1994թ. կոնվենցիան (ՄՊՀ) ստորագրելիս Ադրբեջանն արել է հետևյալ վերապահումները. 1. «Ադրբեջանի Հանրապետությունը մասնակցում է «Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ապահովման» կոնվենցիային այն ծավալով և սահմաններում, որոնք չեն հակասում Ադրբեջանի Հանրապետության սահմանադրությանն ու ազգային օրենսդրությանը»: 2. «Ադրբեջանի Հանրապետությունն իր համար իրավաբանորեն պարտադիր չի համարում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ապահովման կոնվենցիայի հոդված 13-ի դրույթները» (կոնվենցիայի հոդված 13-ն ամրագրում է, որ «սույն կոնվենցիայի իրագործման վերահսկողությունը դրվում է մարդու իրավունքների գծով հանձնաժողովի վրա, որը հիմնվում է Անկախ Պետությունների Համագործակցության կանոնադրության 33-րդ հոդվածին համապատասխան»):

շումները թեկուզ հետևյալ հարցերի շուրջ.

1. ռուսերենին տալ Ադրբեջանի Հանրապետության պետական լեզվի կարգավիճակ,
2. Ադրբեջանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համամասնական ներկայացուցչություններ իշխանական մարմիններում,
3. ապահովել Ադրբեջանի Հանրապետության քաղաքացիներին մյուս կողմի քաղաքացիություն կամ երկակի քաղաքացիություն ձեռք բերելու իրավունքով» [20]:

Կարծիքներ էին արտահայտվում նաև այն մասին, որ «պայմանագիրը չի լուծում Ադրբեջանում Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների իրավական կարգավիճակի, ռուսալեզու զանգվածային լրատվամիջոցներին առնչվող հիմնախնդիրները, ինչը զգալիորեն վատթարացնում է անդրկովկասյան պետություններում ամենամեծաթիվ ռուսական սփյուռքի կացությունն Ադրբեջանում» (*Մ. Կոնստանտինով, ՌԴ Պետդումայի՝ ԱՊՀ գործերի և հայրենակիցների հետ կապերի կոմիտեի աշխարհաքաղաքականության գծով փորձագետ*) [20]:

2004թ. փետրվարի 6-ին երկու երկրների նախագահների կողմից ստորագրված մոսկովյան հռչակագրում կոդները, ի թիվս այլոց, համաձայնության են եկել, որ «կօժանդակեն ազգային փոքրամասնությունների էթնիկական, լեզվական, մշակութային և կրոնական ինքնատիպության պահպանմանն ու զարգացմանն ուղղված բարենպաստ պայմանների ապահովմանը»:

Ադրբեջանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության գործերով ժամանակավոր հավատարմատար Պ.Բուրդիկինն իր հարցազրույցում կարծիք է հայտնել այն բանի հնարավորության և անհրաժեշտության մասին, որ «մեր սփյուռքերը կարելի է վերածել ժողովրդական դիվանագիտության ակտիվ գործոնի, ինչը կնպաստի միջպետական հարաբերությունների զարգացմանն ու բարելավմանը»: Նա նշել է, որ ծրագրվում է «առաջիկայում Ադրբեջանի հեռուստահաղորդումների հեռարձակումը Դաղստանում (Դերբենտում), որտեղ շատ էթնիկ ադրբեջանցիներ են ապրում» [21]:

2. Ադրբեջանի կողմից ազգային փոքրամասնությունների իրավունքների խախտումը տեղեկատվական ոլորտում

Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ մայրենի լեզվով տեղեկատվություն ստանալու իրավունքը, մասնավորապես՝ այսպես կոչված անդրսահմանային հեռարձակման միջոցով, Ադրբեջանում

կրում է սահմանափակ բնույթ: Նշելով «հայ ազգային փոքրամասնության» առկայության մասին¹ երկրի պաշտոնական իշխանությունները խոչընդոտում են Ադրբեջանում հայկական հեռուստատվիքների անդրսահմանային հեռարձակումը՝ հավանաբար առաջնորդվելով Ադրբեջանի պետության ազգային անվտանգության և տարածքային ամբողջականության ապահովման փաստարկներով: Դրանով իսկ խախտվում են 1995թ. Շրջանակային կոնվենցիայի դրույթները, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի շրջանակներում ձևակերպված հատուկ՝ *Հեռուստա-ռադիոհեռարձակումներում ազգային փոքրամասնությունների լեզուների օգտագործման վերաբերյալ հանձնարարականները* (2003թ. հոկտեմբեր):

Շրջանակային կոնվենցիայի 9-րդ հոդվածը պետություններին պարտավորեցնում է «ընդունել, որ ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի արտահայտվելու ազատության իրավունքը ներառում է ազատ որևէ կարծիք ունենալու և փոքրամասնության լեզվով տեղեկատվություն ստանալու, տեղեկատվություն և մտքեր փոխանակելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից»: Շրջանակային կոնվենցիան սահմանում է նաև, որ չպետք է խտրականություն լինի զանգվածային լրատվամիջոցների նկատմամբ իրավունքի տրամադրման մեջ: «Մասնակիցներն իրենց իրավական համակարգերի շրջանակներում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար ապահովում են, որպեսզի չենթարկվեն խտրականության զանգվածային լրատվամիջոցների նկատմամբ իրավունքի տրամադրման մեջ»:

Հեռուստա-ռադիոհեռարձակումներում փոքրամասնությունների լեզուների օգտագործման վերաբերյալ 2003թ. հանձնարարականները նախատեսում են «անդրսահմանային հեռարձակման ազատ ընդունում ինչպես ուղիղ, այնպես էլ հաղորդման կրկնության կամ վերահեռարձակման միջոցով», ինչը «չպետք է սահմանափակվի լեզվական սկզբունքով»: Որպես այստեղից բխող դրույթ՝ հանձնարարականներում նշվում է, որ «փոքրամասնության լեզվով օտարերկրյա հեռուստահաղորդման մատչելիությունը չի վերացնում երկրի ներսում այդ լեզվով հաղորդումների զարգացմանն աջակցելու վերաբերյալ պետության պարտավորությունը, ինչպես և չի արդա-

¹ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության վերաբերյալ Շրջանակային կոնվենցիայի դրույթների կատարման մասին վերջին զեկույցում պաշտոնական Բաքուն նշել է երկրի տարածքում ավելի քան 120 հազար հայերի առկայության մասին, որոնք «հիմնականում բնակվում են Ադրբեջանի Լեռնային Ղարաբաղի շրջանում: Չնայած Հայաստանի հետ ռազմական հակամարտությանն ու նրա կողմից շարունակվող՝ Ադրբեջանի տարածքների մի մասի բռնագավթմանը, եղած տվյալների համաձայն Լեռնային Ղարաբաղի շրջանից դուրս, այդ թվում Բաքու քաղաքում, ապրում են 30-50 հազար հայեր: Հաղորդակցության լեզուն հայերենն է, որը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին» (Report Submitted by Azerbaijan Pursuant to Article 25, Paragraph 1 of the Framework Convention For The Protection of National Minorities, Received on 4 June 2002).

րացնում այդ լեզվով հաղորդումների տևողության կրճատումը» (կետ 13):

Շրջանակային կոնվենցիայի 9-րդ հոդվածի 4-րդ մասով մասնակից պետություններից պահանջվում է «պատշաճ միջոցներ ձեռնարկել՝ հեշտացնելու համար ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ զանգվածային լրատվամիջոցների նկատմամբ իրավունքը՝ հանդուրժողականության խրախուսման և մշակութային բազմակարծության ապահովման նպատակներով»:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականներից մեկի համաձայն՝ «այն ժամանակ, երբ հանրային հեռարձակողների վրա դրված է հանդուրժողականության և ըմբռնման տարածման պարտականությունը, հեռուստա-ռադիոհեռարձակումն ընդհանուր առմամբ այն մթնոլորտի ստեղծման հզոր ուժ է, որում կարելի է պայքարել անհանդուրժողականության դեմ»¹:

Անդրսահմանային հեռահաղորդումների ազատ ընդունումը ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքն է՝ ազատ և խաղաղ անդրսահմանային շփումներ հաստատել և պահպանել հատկապես այն անձանց հետ, ովքեր նրանց հետ ունեն ընդհանուր էթնիկական, մշակութային, լեզվական կամ հոգևոր ժառանգություն, ինչպես նշված է Շրջանակային կոնվենցիայի 17-րդ հոդվածում: *Անդրսահմանային հեռուստատեսության մասին 1989թ. Եվրոպական կոնվենցիայի 4-րդ հոդվածով նախատեսվում է, որ մասնակից պետություններն «ապահովում են այն ծրագրերի ընդունման ազատությունը, որոնք համապատասխանում են սույն կոնվենցիայի դրույթներին, և չեն սահմանափակում իրենց տարածքում դրանց վերահեռարձակումը»:*

Ի լրումն ասվածի՝ *Տարածաշրջանային լեզուների և փոքրամասնությունների լեզուների 1992թ. եվրոպական խարտիայի 11-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «մասնակիցները պարտավորվում են երաշխավորել հարևան երկրներից ռադիո- և հեռուստահաղորդումների ուղիղ ընդունման ազատությունը այն լեզվով, որը նույնն է կամ մոտ է տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվին, և չխոչընդոտել հարևան երկրներից այդ լեզվով ռադիո- և հեռուստահաղորդումների վերահեռարձակմանը»:*

Մարդու իրավունքների կոմիտեին (ստեղծվել է 1966թ. դեկտեմբերի 19-ին, *Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտի* ֆակուլտատիվ արձանագրության համապատասխան) ազգային փոքրամասնությունների պաշտպանության՝ ըստ նշված պակտի ստանձնած

¹ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի *NR (97) 21* հանձնարարականի հավելվածը «Զանգվածային լրատվամիջոցների և հանդուրժողականության մթնոլորտի զարգացման մասին» (կետ 5):

պարտավորությունների¹ կատարման մասին տված երկրորդ զեկույցում Ադրբեջանը նշել է, որ երկրի տարածքում «տրվում են ռադիո- և հեռուստատեսային հաղորդումներ, հրատարակվում են գրքեր, ամսագրեր և թերթեր հանրապետությունում բնակվող տարբեր փոքրամասնությունների լեզուներով [22]: Այսպես, քրդերեն, լեզգիերեն, թալիշերեն, վրացերեն, ռուսերեն, հայերեն լեզուներով² հանրապետական ռադիոյում կազմակերպվել են կանոնավոր ռադիոհաղորդումներ, որոնք ֆինանսավորվել են պետական բյուջեից: Ամբողջ ծավալով հեռարձակվում են ռուսաստանյան *OPT, PTP, HTB*, թուրքական *TRT1*, Նարգիզ *TV, TGRT, CTB* ալիքները: Ադրբեջանում կան նաև մի քանի մասնավոր հեռուստառադիոընկերություններ, պետական հեռուստաալիքն ունի ծրագիր անգլերեն լեզվով»³ (զեկույցի 651-րդ կետ):

Եվրոպայի խորհուրդ մտնելիս Ադրբեջանի Հանրապետությունն ստանձնել է մի շարք պարտավորություններ, որոնցից կարելի է նշել հետևյալները. 1. երաշխավորել կարծիքներ արտահայտելու ազատությունը և զանգվածային լրատվամիջոցների ու լրագրողների անկախությունը և, մասնավորապես, բացառել ՁԼՄ ազատությունը սահմանափակելուն ուղղված վարչական միջոցների կիրառումը, 2. ազգային հեռուստաալիքը վերափոխել հանրայինի, որի կառավարումն իրականացնելու է կառավարիչների անկախ խորհուրդը, 3. Եվրոպայի խորհուրդ մտնելուց հետո երեք տարվա ընթացքում ընդունել օրենք փոքրամասնությունների մասին, որը կլրացներ սահմանադրության և քրեական օրենսգրքի՝ խտրականության անթույլատրելիության մասին դրույթը և իրենով կփոխարիներ ազգային փոքրամասնությունների մասին նախագահական հրամանը:

Առաջին պարտավորության վերաբերյալ Ադրբեջանի քաղաքականությունը հայտնի է և արժանացել է միջազգային կառավարական և հասարակական կազմակերպությունների քննադատությանը: Երկրորդ պարտավորությունը, որը հարաբերակցվում է առաջինին, կատարվել է ձևականորեն, իսկ բովանդակային առումով ակնկալիքները դեռ չեն իրականացել:

¹ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966թ. միջազգային պակտի հոդված 27:

² Հետաքրքիր է, թե ինչպես է սա առնչվում և «հարմարվում» Ադրբեջանի պետության և ադրբեջանական հասարակության բացարձակ անհանդուրժողականության ամեն հայկականի նկատմամբ: «Վստահաբար կարելի է խոսել այն մասին, որ զեղծվում են հայերի թվաքանակն ու նրանց մասին այլ տեղեկություններ: Մեր ունեցած տեղեկություններով՝ հայտնիները Բաքվում ոչ միայն չեն խոսում հայերեն, այլ փորձում են առավելագույնս աննկատ կյանք վարել: Եթե նրանք հնարավորություն ունենային, նույնիսկ հարևաններից կթաքցնեին իրենց հայկական ծագումը: Ավելին, հայտնի են առանձին դեպքեր, երբ նրանց ընտանիքները ցանկացել են տեղափոխվել, փոխել բնակարանները, որպեսզի նոր տեղում թաքցնեն իրենց մոր կամ կնոջ ազգային պատկանելությունը» [11, c. 100].

³ «Հեռուստառադիոհաղորդումների ազգային խորհրդից ստացված տեղեկատվության համաձայն՝ Ադրբեջանում կան 5 համահանրապետական հեռուստաընկերություններ (4-ը՝ մասնավոր, 1-ը՝ պետական) և 12 տարածքային հեռուստաընկերություններ: Եթե էն դուրս գալիս 7 մասնավոր ռադիոընկերություններ (գրեթե բոլորը՝ երաժշտական-զվարճալի)» [23 c. 67]:

«...2003թ. վերջին Եվրոպայի խորհրդի ճնշմամբ Միլլի մեջլիսը (Ադրբեջանի խորհրդարանը) ընդունեց օրենք Հանրային հեռուստատեսության մասին: Օրենքում, ի թիվս այլոց, ասվում է. «Պաշտոնական տեղեկատվությունը պետք է հաղորդվի անհապաղ և առանց կրճատումների»: Սրան կարելի է հավելել, որ Միլլի մեջլիս է մտցվել «Տեղեկատվության ազատության մասին» օրինագիծը, որը պետք է օգնի լրագրողներին անհապաղ տեղեկատվություն ստանալ կառավարական շրջանակներից: Սակայն Հանրային հեռուստատեսության մասին այդ նույն օրենքի համաձայն՝ Հանրային հեռուստատեսության կառավարիչների խորհրդի անդամներին որոշելու է մրցության հանձնաժողովը, որն ստեղծվում է գործադիր իշխանության համապատասխան մարմնի կողմից: Շրջանակը փակվեց. «հանրայինը» վերածվեց «քաղաքական իշխանությունից կախյալի». ըստ էության, «հանրայինը» չկար և այժմ էլ չկա» [23, c. 64]:

Երրորդ պարտավորության վերաբերյալ, որն անմիջականորեն առնչվում էր ազգային փոքրամասնությունների իրավունքի հետ, նշենք, որ փոքրամասնությունների իրավունքներին նվիրված «Մշակութային բազմազանությունը և զարգացումը Կենտրոնական Ասիայում» ենթատարածաշրջանային սեմինարում (2004թ. հոկտեմբերի 27-30, Բիշքեք) փոքրամասնությունների հիմնախնդիրների գծով միջազգային կովկասյան հիմնադրամը ներկայացնող Ն.Քամալադդինովը մասնակիցներին տեղեկացրեց, որ Ադրբեջանը ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին Եվրոպական շրջանակային կոնվենցիայի մասնակից է: Չնայած փոքրամասնությունների մասին Ադրբեջանում որևէ օրենք չի ընդունվել, ինը հոդվածից բաղկացած օրինագիծ, այնուամենայնիվ, իրականում գոյություն ունի: Ն.Քամալադդինովի կարծիքով՝ նման օրենք, հնարավոր է, կընդունվի հետագայում, թեև դա էլ դժվար թե իրականում հանգեցնի փոքրամասնությունների պաշտպանության բարելավմանը կամ ուժեղացմանը: Պատասխանելով այն հարցին, թե ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները մասնակցում են պետական ծառայությունների աշխատանքներին, Ն.Քամալադդինովը հայտարարեց, որ Ադրբեջանի խորհրդարանում էթնիկական խմբերի համար ձայների տեղ չկա [24]:

3. Քարոզչությունը և դրա դրսևորումները Ադրբեջանի ազգային փոքրամասնությունների պաշտպանության ոլորտում

Ադրբեջանի կողմից *Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին 1995թ. Շրջանակային կոնվենցիայի* վավերացման ժամանակ հռչակվեց, որ «Շրջանակային կոնվենցիայի վավերացումը և դրա դրույթնե-

րի իրականացումը բացառում են Ադրբեջանի Հանրապետության տարածքային ամբողջականության և ինքնիշխանության, նրա ներքին ու արտաքին անվտանգության դեմ ուղղված ցանկացած գործողություն»¹:

Շրջանակային կոնվենցիայի (2002թ.) դրույթների իրականացման վերաբերյալ վերոնշյալ գեկույցում՝ կոնվենցիայի 21-րդ հոդվածի իր «մեկնաբանություններում» Ադրբեջանը բաց չթողեց հնարավորությունը (հերթական անգամ) շեղվելու որոշակիությունից և ամբողջովին կենտրոնացավ իրեն հարազատ թեմայի վրա, որն է՝ պետության տարածքային ամբողջականության պաշտպանությունը՝ որպես ներկայիս Ադրբեջանի արտաքին և ներքին քաղաքականության հարցերի հարց: Ջեկույցում հիշատակվել էր այն մասին, որ «Ադրբեջանի Հանրապետությունը ելնում է նրանից, որ ամենաշատ խնդիրներ առաջանում են այն դեպքերում, երբ արտաքին ուժերի՝ հիմնականում «մայր երկրի» կողմից հրահրվող ազգային կամ էթնիկական փոքրամասնությունը պահանջում է ինքնորոշում անջատվելու կամ սահմանների վերափոխման ճանապարհով: Ընդ որում՝ նման դեպքերում փոքրամասնությունների կողմից էթնիկական նացիոնալիզմի քաղաքականության գրեթե անխուսափելի հետևանքն է այն, որ վերջիններս փորձում են ազատվել իրենց տարածքում ապրող այլ էթնիկական խմբերի ներկայացուցիչներից՝ էթնիկական «մաքուր» կազմ ունենալու, սահմանների վերանայման նպատակով, որպեսզի միանան հարևան պետությանը, որի բնակչության մեծամասնությունը պատկանում է այդ նույն էթնիկական խմբին: ... Հակամարտությունների կարգավորումը, որոնցում ներգրավված են ազգային փոքրամասնություններ, պետք է հիմնվի առաջին հերթին պետության տարածքային ամբողջականության վերականգնման ու անձեռնմխելիության և նրա տարածքում ապրող ազգային փոքրամասնության ինքնության պահպանման ու քաջալերման վրա»:

Տպավորությունն այնպիսին է, որ ինչի մասին էլ որ խոսք լինի, Ադրբեջանը, հատկապես եթե ևս մեկ հնարավորություն ունի ելույթ ունենալ միջազգային կազմակերպության ամբիոնից, ի վերջո, ամեն ինչ հանգեցնում է երկրի տարածքային ամբողջականության պահպանման գերակայությանը և, այսպես թե այնպես, արվում են թափանցիկ ակնարկներ հայ «ազգային փոքրամասնության» անջատողականության մասին «ժողովրդավարական» Ադրբեջանի կազմում: Երբ խոսում են սահմանների վերանայման մասին, «որպեսզի միանան հարևան պետությանը, որի բնակչության

¹ Declaration contained in the instrument of accession deposited on 26 June 2000: «The Republic of Azerbaijan, confirming its adherence to the universal values and respecting human rights and fundamental freedoms, declares that the ratification of the Framework Convention for the Protection of National Minorities and implementation of its provisions do not imply any right to engage in any activity violating the territorial integrity and sovereignty, or internal and international security of the Republic of Azerbaijan» (www.coe.int).

մեծամասնությունը պատկանում է այդ նույն էթնիկական խմբին», նույնպես թափանցիկ կերպով շոշափվում է ադրբեջանական ղեկավարության սիրած թեման՝ «ագրեսիա» Հայաստանի Հանրապետության կողմից:

Ադրբեջանի Հանրապետությունում պետք է հասկանան ազգային փոքրամասնությունների նկատմամբ իրենց մոտեցման (որպես պոտենցիալ անջատողական էթնոմշակութային հանրություն, որ կասկածվում է դեպի «մայր երկիր» ձգտման մեջ) ողջ անհեռանկարայնությունն ու վնասակարությունը՝ առաջին հերթին իրենց համար: Լեզգիների, ավարների և ծախուրների համար նման «մայր երկիր» է Դադստանի Հանրապետությունը Ռուսաստանի Դաշնության կազմում, ինգիլոյների (վրացի) համար՝ ինքնիշխան և անկախ Վրաստանը, թալիշների համար հնարավոր է, որ Իրանն է ավելի շատ «մայր երկիր», քան Ադրբեջանի Հանրապետությունը, որն ավելի շատ ասիմիլացնող է, քան ինտեգրող: Եթե վերջինս «մայր երկիր» հետ անմիջական տարածքային սահման ունեցող իր ազգային փոքրամասնությունները դիտարկի այս տեսանկյունից, ապա միջազգային իրավական պարտավորությունների ստանձնումը կկրի ձևական բնույթ՝ առանց իր տարածքում եվրոպական իրավական սկզբունքների և նորմերի ընկալման և իրականացման իրական ու տքնաջան աշխատանքի: Ադրբեջանի ազգային փոքրամասնությունները կձգտեն դեպի իրենց «մայր երկրները»՝ առաջնային համարելով իրենց էթնիկական ինքնությունը և ոչ թե քաղաքացիական պատկանելությունն այն պետությանը, որը ձևականորեն է վերաբերվում միջազգային իրավական չափանիշների իրականացմանը ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում:

Միայն ընդհանուր պատմության, լեզվի ու մշակույթի հիման վրա ձևավորվող ազգային ինքնագիտակցությունը, միայն մեկ ազգին պատկանելության գիտակցությունն է, որ հարկադրում է իրարից հեռու գտնվող մարդկանց, որ ցրված են հեռավոր վայրերում, զգալ փոխադարձ քաղաքական պատասխանատվություն: Միայն այսպես են քաղաքացիներն իրենց սկսում տեսնել իբրև մեկ ամբողջի մասեր, որքան էլ աբստրակտ իրավաբանական տերմիններով դա արտահայտվի [25]:

Անընդունելի է, երբ ազգային փոքրամասնությունը դրվում է ընտրության (կա՛մ «մայր երկիր», կա՛մ քաղաքացիական պատկանելության երկիր), երկրնորանքի (կա՛մ «անջատողականություն», կա՛մ «պասիվ ձուլում») առջև:

Հետխորհրդային տարածքում ստեղծված իրավաքաղաքական պայմաններում սփյուռքի¹ հավաքական ինքնությունն ստանում է նոր իմաստ,

¹ Սփյուռք ասելով այստեղ հասկացվում է էթնոմշակութային հանրությունը, որում դրսևորվում են ազգային փոքրամասնության բոլոր բնութագրերը:

որում կարելի է առանձնացնել մի քանի կողմնորոշիչներ. ա) մայր էթնոսի և համապատասխան հանրապետության կամ պետության մշակույթը, բ) սեփական էթնոմշակութային հանրության մշակույթը, որն այսպես թե այնպես մոտ է մայրականին: Մեր կարծիքով՝ սփյուռքի համար կարևորագույնը ոչ թե մշակութային ինքնորոշման ոլորտում այլընտրանքային ընտրության խնդիրն է, այլ նշված մշակութային կողմնորոշիչների համատեղումն ու սփյուռքյան մշակույթի հատուկ սինկրետիկ տեսակի ստեղծումը [1, с. 186]:

Ասվածին կարելի է հավելել, որ սինկրետությունն անհրաժեշտաբար պետք է ներկայացված լինի ոչ միայն մշակութային համատեքստում, այլև պետք է տանի դեպի ազգային փոքրամասնությունների իրավաքաղաքական ինտեգրվածություն քաղաքացիական պատկանելության երկրի ժողովրդավարական հասարակական-քաղաքական դաշտում:

Մայիս, 2006թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Аствацатурова М. А.*, Диаспоры: этнокультурная идентичность национальных меньшинств (возможные теоретические модели) // *Диаспора*, 2003, № 2, С. 184.
2. *Асим Оку*, Иран может взорвать Азербайджан изнутри. <http://www.axisglobe-ru.com>. 30.06.2005 г.
3. *Асбьерн Эйде*, Глобальный и региональный подходы к ситуациям, включающим меньшинства // *Заполняя рамки (пять лет мониторинга Рамочной конвенции по защите национальных меньшинств)* - Тб., 2004, с. 37.
4. *Борис Цилевич*, Рамочная конвенция в контексте Совета Европы // *Заполняя рамки (пять лет мониторинга Рамочной конвенции о защите национальных меньшинств)* – Тб., 2004, с. 14.
5. *Ямсков А.*, Традиционное землепользование кочевников исторического Карабаха и современный армяно-азербайджанский конфликт // *Фактор этноконфессиональной самобытности в постсоветском пространстве*, М., 1998, с. 175-176.
6. *Бадалов Р.*, Демократия в Азербайджане: начало XXI века // *Диаспора, нефть и розы. Чем живут страны Южного Кавказа*, Ер., 2005, с. 24.
7. *Расим Мусабеков*, Становление независимого азербайджанского государства и этнические меньшинства. http://www.sakharov-center.ru/azrus/az_012.htm.
8. *Вартанян А.*, Ирано-азербайджанские отношения: диалог с переменным успехом. <http://www.iimes.ru>. 27.03.2006 г.
9. *Гюльшен Пашаева*, Вопросы языковой политики в независимом Азербайджане <http://www.cidcm.umd.edu/partners/159.htm>.

10. *Джафаров Т., Джарчиева И.*, Решение языковых проблем в современном Азербайджане. <http://www.ostu.ru/conf/ruslang2005/trend5/jafarov.htm>.
11. *Грануш Харатян*, Проблемы этнического выживания национальных меньшинств Азербайджана // «Спектр», Вопросы региональной безопасности, 2005, № 2, с. 99.
12. *Румянцев С.*, Влияние урбанизации на становление социальной структуры азербайджанского общества // Центральная Азия и Кавказ, 2004, № 3 (33), с. 126.
13. *Миллер Б.*, Таты, их расселение и говоры (материалы и вопросы), Баку, 1929, с. 7.
14. *Семенов И.*, Горские евреи Кавказа. Некоторые аспекты этнической идентификации // Центральная Азия и Кавказ, 2003, № 3 (27), с. 194 – 195.
15. *Беккер М.*, Евреи в Азербайджане: история и перспективы // Центральная Азия и Кавказ, 2000, № 2 (8), с. 270.
16. *Зейналова С.*, Немцы в Азербайджане: ретроспективный анализ // Центральная Азия и Кавказ, 2005, № 6 (42), с. 170.
17. *Лейла Амирова*, Азербайджанские лезгины равнодушны к выборам // Институт по освещению проблем войны и мира (IWPR), № 307, 6 октября, 2005). <http://www.iwpr.net>.
18. <http://tolishpress.com/index.php/> 14.03.2006 г.
19. *Абасов А.*, Демографические процессы и анализ гендерной ситуации в Азербайджане // Центральная Азия и Кавказ, 2001, № 2 (14).
20. Из экспертных оценок и заключений по договору между Российской Федерацией и Азербайджанской Республикой <http://www.slavmir.ru/arhiv98/sib03jan.htm#1>.
21. Газета «Право выбора» (Азербайджан), № 4, апрель 2005г., <http://www.embrus-az.com/rus-az.html>.
22. Комитет по правам человека, рассмотрение докладов, представленных государствами-участниками в соответствии со статьёй 40 Международного пакта о гражданских и политических правах, Азербайджан (2000), CCPR/C/AZE/99/2. <http://www1.umn.edu/humanrts/russian/hrcommittee/Rhrcrprt-azerbaijan2000.html>.
23. *Мамедли З.*, СМИ Азербайджана: пять горьких истин и одна надежда // Диаспора, нефть и розы. Чем живут страны Южного Кавказа, Ер., 2005.
24. <http://www.ohchr.org/english/issues/minorities/docs/2005-wp.2-rus.doc>.
25. *Юрген Хабермас*, Европейское национальное государство: его достижения и пределы. О прошлом и будущем суверенитета и гражданства // Нации и национализм. Сборник статей, М., 2002, с. 369.

НАЦИОНАЛЬНЫЕ МЕНЬШИНСТВА АЗЕРБАЙДЖАНА: ПОЛИТИКО-ПРАВОВЫЕ АСПЕКТЫ

Михаил Агаджанян

Резюме

Одним из главных показателей стремления многонациональных республик бывшего Союза ССР к построению правового государства можно считать продуманную и эффективно реализуемую политику по обеспечению достойного представительства своих граждан, вне зависимости от их национальной принадлежности, во всех сферах общественно-политической жизни новых постсоветских государств. Общий каркас национальной политики государства должен строиться на основе международно-правовых стандартов в сфере обеспечения указанного достойного представительства, с обязательным соблюдением и реальным осуществлением принятых на себя в рамках международных организаций или соглашений обязательств в сфере защиты национальных меньшинств. В целом можно сказать, что в идеале необходимо стремиться к тому, чтобы о защите национальных меньшинств говорилось только в исключительных случаях и обеспечение прав и свобод лиц, принадлежащих к меньшинствам, представлялось как само собой разумеющееся положение вещей.

Приходится констатировать большой пропагандистский настрой нынешнего Азербайджана, который, по всей видимости, становится нормой жизни молодой азербайджанской государственности. На одной пропаганде «здорового национального образа жизни» современного Азербайджана, которая вовсю работает в международных институтах, невозможно создать эффективную внутригосударственную систему интегрированности национальных меньшинств в политико-правовую, социально-экономическую, культурную ткань жизнеспособного государства. По нашему мнению, большая доля «искусственности» появления государства с названием Азербайджан на современной политической карте мира, заложенная ещё в самом начале 20-х годов XX века, тем более ощущается на пространстве нынешней Азербайджанской Республики. Одной из составляющих этой «искусственности» выступает национальная нетолерантность азербайджанской политической элиты. Построенная по клановому принципу, она по определению не может твёрдо стоять на принципах достойного представительства национальных меньшинств в об-

щественно-политической, государственной жизни республики.

Принципы ассимиляции национальных меньшинств явно преобладают над принципами их интеграции, националистический настрой политической элиты передается общественности, возведение принципа территориальной целостности в ранг панацеи от всех объективных аргументов о несоблюдении норм в сфере защиты национальных меньшинств смещает поле для конкретного политико-правового разговора в сторону ни к чему не обязывающей пропагандистской риторики.

В целом, можно отметить, что защита национальных меньшинств на территории нынешнего Азербайджана во многих случаях приносится в жертву геополитическим и геоэкономическим интересам крупных региональных и глобальных держав, а голос международных институциональных инстанций теряется на этом фоне.